

Արբերտ Ա. Մակարյան
բանաս. գիր. դոկտոր

**ԹԱԳՈՒՀԻ ՇԻՇՄԱՆՅԱՆ՝
ԱՐԵՎՄՏԱՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ԿՈՐՈՒՍՅԱԼ ԱՍՈՒՊԸ***

«Մի գեղեցիկ գույգ աչքիցս չի հեռանում, շարունակ առաջս է. Ծերենցն ու իր աղջիկը... Ի՛նչ լավ գույգ էին, միակ գույգը, աղավնու նման միշտ իրար հետ սիրով, միշտ անբաժան իրարից... Ինչքա՛ն բանաստեղծություն կար, ինչքա՛ն էր գեղեցիկ... Աղջիկը շար լավ դեմք էր, կրթված, զարգացած, ինտելիգենտ, կուլտուրական մարդ: Ինչքա՛ն ռոմանտիկա կար նրանց մտերմության մեջ, ինչքա՛ն գեղեցկություն... Ամեն օր, ժամը 4-ին, քեանցուկ հայր ու աղջիկ միշտ դուրս էին գալիս զբոսնելու Դվարցովայա փողոցը. միշտ փեսնում էի երկուսին միասին...»¹:

Հովհաննես Թումանյան

«Համայն մանկանց թագուհին»

Թիֆլիսյան հեռավոր տարիներից այսպիսի հիացական խոսքերով է հիշել Ծերենցին ու նրա շնորհաշատ դստերը Մոսկվայում քաղցկեղից տառապող Հովհաննես Թումանյանը ... իր վախճանից ընդամենը 21 օր առաջ՝ 1923-ի մարտի 2-ին:

Հիրավի, Թագուհի Շիշմանյանը (1859-1885) սիրված է եղել շատերի կողմից, համընդհանուր հարգանք վայելել հայրենի ժողովրդի երկու հատվածներում. նրան գրեթե հայրական գուրգուրանքով են վերաբերվել Սերովյե Ալիշանն ու Մատթեոս Մամուրյանը, խոր ակնածանք են տածել Արփիար և Տիգրան Արփիարյանները, Գրիգոր



Ծերենցի ընտանիքը

* Հոդվածն ընդունվել է տպագրության 19.10.2010: 1 Թումանյան Ն., Հուշեր և գրույցներ, երկրորդ, լրացված, բարեփոխված հրատարակություն, Եր., «Լույս», 1987, էջ 302-303:

Բ (Ը) փայտ, թիվ 4 (32) հոկտեմբեր-դեկտեմբեր 2010

ՀԱՎԱԿԱԿԱՎԱԿԱՆ ԽԱՆՁԵԱՆ

ու Երվանդ Օտյանները, Պետրոս Ադամյանը... Նա տակավին երեխա էր՝ ընդամենը 8 տարեկան, երբ արժանացավ հայոց առաջին վիպասանուհու՝ Սրբուհի Վահանյանի (հետագայում՝ Տյուսաբ) ուշադրությանն ու բացառիկ համակրանքին: Վերջինս աղջնակին նվիրած «Ուղերձ սիրո» (1867) վերնագրով բանաստեղծության մեջ դրվատանքի խոսքեր ասաց «ի գարնայնոյ լոկ ութ պըսակ ՚ի գարդ գըլխոյդ գեղագանգուր» Թագուկի մտավոր ու ֆիզիկական բարեմասնությունների մասին: Սրբուհի Տյուսաբը, ճիշտ է, իրեն հատուկ վերամբարձ, ինչպես Հակոբ Պարոնյանը կասեր՝ «բարձրաթոչ փետուրի մը» ոճով, այնուամենայնիվ, անկեղծաբար զարմացած էր «նորատի իմաստունի» շնորհներով, որոնք հարուցում էին «նորընձիղ ընկերուհիների» զարմանքը: Ավելին, 26-ամյա Սրբուհին, ով դեռևս հետևում էր Մխիթարյան հեղինակների բռնահանգերին ու մանվածապատ մակդիրներին, տպավորված Թագուկի՝ կարթագենյան գորավարներ Էմիլիան Սցիպիոնին (Զ. ա. 185-129) և Հանիբալին (Զ. ա. 247-183) վերաբերող հիշատակումներից, ընդգծում էր պարմանուհու լեզվի ճարտարությունն ու նրան անվանում «**Համայն Մանկանց Թագուհի**»:

Ո՞ր գիսակերդ գրբգասուն տեսեալ եւ ոչ զարմանայցէ,
Մինչ ՚ի յակումբ փոքրիկ մանկանց, դու իմաստուն նորատի,
Քարոզես գեղեցկաձայն զըՍկիպիոն և զԱնիբալ.
Եւ ճարտար քո լեզուս ճառես զահեղ նոցուն ըզմարտ:
Նորընձիղ ընկերուհիքդ յապուշ կըրթին ըզբարբառէդ,
Ձի ոչ այլ ինչ ճանաչեն բայց ըզվարդիկ, զփըրփուր ջըրոյ,
Ըզթիթեռնիկ գեղապարիկ, գեղախոսիկ և զվըտակ.
Մինդեռ նոքա խընդաբարբառ կըրթին ըզհետ գողտրիկ թըռչնոյ,
Դու զնոսա լըբանես ՚ի հետախոյզ բարձր իմաստից,
Եւ գեղային քո աչկունք կան ՚ի շողշող հրաբորբոք.
Արդեօք իցե՞ս դու զըվարթուն ՚ի կերպարան մանկական.
Քան զի զհանճարդ ունել չէ հնար, զի տակաւին առեր ՚ի ձոն
՚ի գարնայնոյ լոկ ութ պըսակ ՚ի գարդ գըլխոյդ գեղագանգուր:
Քո առընթեր տարփելւոյդ ՚ի տատանիլդ գեղանազ
Ձայնեալ ՚ի սեր «հայրիկ հայրիկ» գոզցես լըսեմ զուսաչ թըռչնոյ
Որ երերուն ՚ի յիւր ճիւղիկ յօրհնէ գերզըն զուարթալից.
Ա՛յնքան քո կոչ է փափկալուր եւ ծածանումըդ գեղաշնորհ:
Ձի՞նչ իցես դու, ասա՛, հրեշտա՞կ կամ թէ պըլպուլ, զի՞նչ, ասա՛,
Ընդէ՞ր լըռես, ո՞ր հանճարիկ, զի՞նչ ինչ անուն քեզ հընչեցից.
**Լու՛ր ինձ ապա, արժանաւոր չեւ յարդարեալ քեզ անուն,
Ձայս ըզխոնարհ տաց քեզ այժմիկ, Համայն Մանկանց Թագուհի՞:**

Թագուկն էլ իր հերթին է համակրել Սրբուհուն, հոր հետ հաճախ այցելել է Վահանյանների՝ Կ. Պոլսի Միջագյուղ թաղամասում գտնվող բնակարանը, և «փաղաքշելու շատ վարպետ» օրիորդ Վահանյանն իր վրա «շատ ազդեցություն»

2 Այս բանաստեղծությունը շուրջ կես դար (48 տարի) մնացել է անտիպ և առաջին անգամ տպագրվել է Թեոդիկի «Ամենուն տարեցույցում», տե՛ս **Թեոդիկ**, Ամենուն տարեցույցը, Կ. Պոլիս, հրատ. և տպագր. Մ. Գովակիմյան, 1915, էջ 159-160:

է ունեցել³: Մեկդի թողնելով, սակայն, Շիշմանյան և Վահանյան ընտանիքների սերտ կապերը (Ծերենցը Սրբուհու եղբոր՝ Հովհաննեսի ընկերն էր և մոր՝ Նազըր Վահանի մտերիմը) ու վիպասանուհու գրչին բնորոշ չափազանցությունները՝ ակնհայտ է մի պարզ ճշմարտություն. դեռ վաղ մանկությունից են ի հայտ եկել Ծերենցի դատեր շնորհներն ու գրական ձիրքը...

1. Անավարտ կենսագրություն

1859-ին Կ. Պոլսում ծնված Թագուհին (մտերիմները նրան փաղաքշաբար Թագուկ էին անվանում) 1867-ին ընդունվում է Օրթագյուղի Ս. Հռիփսիմյանց վարժարանը, որն ավարտում է 1875 թվականի հուլիսի 20-ին՝ «հույժ գովելիս» վարքով և «փույթ ուսումնասիրության, որով ցյալ գութամյա ընթացս ուսման» վկայականով⁴: Ճակատագիրը, սակայն, նրան չէր սահմանել երջանկություն. 15 տարեկան էր, երբ գրկվեց մորից: «Օր. Շիշմանյան նոր կորուսած էր յուր մայրը. պատմում է ժամանակակիցը,- առաջին վիշտն էր գոր կ'ունենար. առաջին վշտերը խորունկ հետք կը թողուն այն սրտերու վրա որք շատ թարմ են տակավին և փափուկ. ժամանակն ու տառապանք դեռ գայն կարծր չեն ըրած: Շատ փոխված էր Օր. Թագուհի: Այդ աղջիկը, դեռ երեկ խինդ և ծիծաղ, հրճվանք ու սեր ընկերակցացն, հանկարծ բոլորովին կերպարանափոխ կը լինի, երբ մի օր դուրս հանեցին յուր տունեն մորը դագաղը ու ինքն հագավ սևերը»⁵: Գեղազետ ու ներհուն 52-ամյա հայրը ջանք չի խնայում մեղմելու զգայուն դատեր հոգու մորմոքը: «Հայրը՝ կորաքամակ ու տխուր՝ իր խիստ դիմագծերուն տակ մանկական գորով մը պահելով միշտ զավկին համար, անբաժան էր Թագուհիեն՝ այն զանգրահեր սիրուն փոքրիկ աղջիկեն, գոր թևն առած շրջագայության կ'ելլեր: Հաճախ, գրեթե ամեն իրիկուն, կը հանդիպեինք անոնց. ու տեսակ մը պատկառանքով կը դիտեինք այդ ծերունին ու այդ մանուկը, ծնողական ու որդիական սիրո այդ մարմնավորությունը»⁶,- իր պատանեկության հիշատակներից այսպես է կենդանագրում Ծերենցին ու նրա դատերը Տիգրան Արփիարյանը:

Այսօր արդեն չափազանց դժվար է պնդել, որ եթե չլիներ «ծնողական ու որդիական սիրո այդ մարմնավորությունը», արդյոք Ծերենցը կկայանա՞ր իբրև գրող, կերկնե՞ր իր ռոմանտիկական պատմավեպերը: «Մուսա-դուստրը» (Պ. Ադամյանի բնորոշումն է) միշտ հոր կողքին էր, շարունակ հորդորում էր նրան՝ «սրտի անշեջ վառարանեն քանի մը կայծ տալու ազգին»: Երբ 1876-ի հունվարին Շիշմանյանները հաստատվում են Կիպրոսի Նիկոսիա քաղաքում, և Ծերենցն ստանձնում է տեղի հիվանդանոցի տնօրենի պաշտոնը, Թագուկն իր վրա է վերցնում ոչ միայն հոր խնամքի պարտականությունը, այլև դառնում է նրա խոհերի ու մտորումների ժրաշան արձանագրողը. Նիկոսիայի նավահանգստին 15 օրը մեկ մոտեցող շոգենավի միջոցով նամակներ է առաքում Ծերենցի մտերիմներին՝ վերջիններիս հաղորդակից դարձնելով երևելի գրագետի հանրային-քաղաքական ծրագրերին ու գրական մտահղացումներին:

3 Տես Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան, այսուհետև՝ ԳԱԾ, Ծերենցի ֆոնդ, 25/1:

4 Տես նույն տեղում, Ծերենցի ֆոնդ, 50/1:

5 **Չրագղան** (Արփիար Արփիարյան), Օրվան կյանքը. Տիկին Թագուհի Մելիք-Ազարյանց, «Արևելք», լրագիր, Կ. Պոլիս, 1885, թ. 339, 18 փետրվարի:

6 **Արփիարյան Տ.**, Հավվաբար (կովկասյան հիշատակ), «Մասիս», հանդես, Կ. Պոլիս, 1892, թ. 3958, 14 փետրվարի, էջ 49:

Ահա ինչ է գրում Եր. Օտյանը Ծերենցի կիպրոսյան այդ տարիների մասին. «Իր իսկ վկայությամբ (Ծերենցի.- Ալ. Մ.) կյանքին գեղեցկագույն շրջանը եղած է Միջերկրականի այդ կղզին անցուցած օրերը և, իրավ, իրեն պես զգայուն, գորովալի և գրասեր մարդու մը համար ի՞նչ ավելի մեծ երջանկություն քան այդպես պայծառ երկնքի մը տակ քաշված՝ անձնատուր ըլլալ գրականության, կին մը ունենալով քովը, կին մը որ իր աղջիկն է, որ իր միակ աղապատանքն է (գուրգուրանքը.- Ալ. Մ.) աշխարհի վրա, որ զինքը կը սիրէ ու կը հասկնա և ամեն վայրկյան խնամքով ու քաղցրությամբ կը շրջապատէ: Այս աղջիկը՝ որուն վրա ամփոփված էին Շիշմանյանի սրտին բոլոր սիրո գանձերը, անոր կյանքին մեծագույն մխիթարանքը, միակ հմայքը եղած էր և որ, ափսո՛ս, վերջն ալ, իր մահով, անոր ետքի տարիներուն դժբախտության ու կսկծանքին միակ առարկան պիտի ըլլար, իբր թէ ուզելով՝ այսպես մեկ երկու տարվան մեջ՝ քավել տալ անոր պատճառած ամբողջ երջանկությունը»⁷:

Թագուհին քաջատեղյակ էր ոչ միայն հայրենի, այլև եվրոպական գրականությանը. նրա նախընտրած հեղինակներն էին Շեքսպիրն ու Գյոթեն, Ռուսոն ու Մոլիերը, Լամարթինն ու Բալզակը, Հյուգոն ու Սքոթը, Դյուման, Վ. Թեքերեյի՝ իրեն ժամանակակից ավագ դուստրը՝ Աննա-Իզաբելլա Թեքերեյ-Ռիչին, ու հատկապես՝ Ալֆրեդ դը Մյուսեն: «Միջերկրականի կղզյաց միւսյն մեջ հայր և աղջիկ, մշտադալար նարնջենիներ և կիտրոններ շրջապատյալ և չափավոր ու զոհ սակավապետ դրից մեջ՝ գրեթէ անապատի մը մեջ կ'ապրէին: ... Ֆրանսայի դասական հեղինակը այդ աղջկան արդեն ծանոթ էին, նույն ազգին ժամանակակից հեղինակաց մեկ մասն նաև յուր հորմեն լավ կը ճանչեր կարելի է ըսել: Անգլիացի հեղինակաց թարգմանությունք՝ ինչ որ կ'անցներ ի ձեռս՝ անհագ կը կարդար և անպատճառ յուր գիտցածը տարածելու՝ ցուցնելու փափագը շատ չափավոր էր յինքն»⁸, - տարիներ հետո այսպես պիտի հուշագրեր Ծերենցը:

Եվրոպական մի քանի լեզուների, հատկապես ֆրանսերենի հրաշալի իմացությունը⁹ Թագուհուն հնարավորություն է տվել կատարելու բազմաթիվ թարգմանություններ: Օրինակ՝ 1876-ին Կ. Պոլսից Կիպրոս գնալու ճանապարհին, երբ Ծերենցն ու իր դուստրը Չմյուռնիայում այցելում են «Արևելյան մամուլ» հանդեսի խմբագիր Մատթեոս Մամուրյանին ու ջերմ հյուրընկալության արժանանում նրա ընտանիքի կողմից, տիկին Մամուրյանը Թագուհին է նվիրում Վիկտոր Հյուգոյի «Վիլյան Շեքսպիր» գիրքը: Նիկոսիա հասնելուն պես աղջիկը հոր հանձնարարությամբ թարգմանում է այդ գրքի հինգերորդ գլխի «Ամբոխ և ոգիք» վերտառությամբ հատվածը¹⁰, ուր արծարծվում էին ժողովրդի մտավոր, գաղափարաբանական և հոգեկան կյանքին առնչվող զանազան խնդիրներ: «Շատ նորատի, հազիվ տասնևվեց տարեկան, Տիկին Մելիք-Ազարյանց, այն ատեն Օր. Շիշմանյան,- հիշում է Արփ. Արփիարյանը,- կ'զգար սրտին խորը սեր, համակրանք ժողո-

7 Օտյան Եր., Գովեսի Շիշմանյան (Ծերենց), «Մասիս», հանդես, Կ. Պոլիս, 1893, թ. 3997, 26 հունիսի, էջ 389:

8 Ծերենց, Առաջաբան Էռնեսթ Լըկուվիեի «Բարոյախոսություն զկանանց» աշխատության, Լըկուվիե Էռնեսթ, Բարոյախոսություն զկանանց: Թարգմանեց յոթերորդ տպագրութենն Թագուհի Շ. Մելիքազարյանց, Կ. Պոլիս, տպագր. Ն. Կ. Պերպերյան, 1889, էջ Է-Թ:

9 Ս. Գոթիֆսիմյանց վարժարանում Թագուհու ֆրանսերենի ուսուցչուհին ֆրանսուհի էր՝ մադամ Կարոլին Ֆուրիեն: Աղջիկը Նիկոսիայից նամակագրական ջերմ կապերի մեջ էր նրա հետ (այդ նամակների ֆրանսերեն ինքնագրերը պահպանվում են ԳԱԹ-ի Ծերենցի ֆոնդում):

10 Վերոնյալ թարգմանությունը նույն տարում լույս տեսավ «Արևելյան մամուլի» երկու համարներում, տես «Արևելյան մամուլ», հանդես, Չմյուռնիա, 1876, թթ. 3 և 6:

վուրդի համար. ամեն ազնիվ հոգիներ միշտ տանջված են ժողովուրդի, կամ թե ամբոխի տառապանաց, տառապանք մտավոր, տառապանք հոգեկան տեսարաններով: ...Այդ թարգմանությունը («Ամբոխ և ոգիք».- Ալ. Մ.) կ'ըներ ի Կիպրոս ուր, առանձնացյալ յուր հորը հետ, կ'աշխատեր, կը սորվեր ու կը սորվեր: Անդ կ'ուզեր մեղմացնել սուգը, թե երբեք մոր մը մահվան սուգը կրնա մեղմանալ, և ներշնչել հայրն որ ընծայե մեր գրականության նոր ընծաներ»¹¹: Ինչպես հուշագրում է Ծերենցը, Թագուկը 1876-ի օգոստոսի 12-ին սկսում է թարգմանել նաև Էռնեստ Լըկուվիեի «Կանանց բարոյախոսություն» գիրքը և արդեն «նույն տարվո Նոյեմբեր 3ին վերջացուցեր էր»¹²:

Ի դեպ, Նիկոսիայում, ինչպես նկատելի է Թագուի ու Մ. Մամուրյանին ու նրա տիկնոջն ուղղված նամակներում տեղ գտած հիշատակումներից, Ծերենցն ու դուստրը վերջիններից պարբերաբար ստանում էին հայրենի և օտարալեզու հարուստ գրականություն: Մտերիմներին (տիկին Մամուրյան, օրիորդ Հերիգա Յուսուֆյան, Ջարեհ Շիշմանյան և այլք) հղված նամակներում օրիորդ Շիշմանյանը պատմում էր, որ Նիկոսիայի հարմարավետ բնակարանում առանձնացած՝ ինքն անդուլորեն կարդում էր, գրում, անգլերենի մասնավոր դասեր ստանում մի քաջահմուտ անգլիացուց, իսկ շաբաթը երեք օր էլ պարապում էր տեղի «ամենախեղճ վիճակի մեջ» գտնվող դպրոցի մի քանի աշակերտների հետ, որոնց դասատուն «բանե խապար մը» չուներ¹³:

Հատկանշական է նաև, որ Կիպրոսում Ալֆրեդ դը Մյուսեից կատարած թարգմանության հետ միասին Թագուիին մի անգամ հորն է հանձնում նրան նվիրված իր հետևյալ բանաստեղծությունը՝ բնորոշ բնաբանով.

**Գլուխըդ երբեք թե ճերմըլի,
Նշենվո նման պիտի լինի:
Ա. տը Մյուսե.**
Գըրե՛ դու դեռ, գրե՛ դու միշտ.
Սըրտիդ անշեջ վառարանն
Քանի մը կայժ տուր քո ազգիդ.
Չնա՛ այդ կայծերն տի արծարծեն:

Գըրե՛, թեպետ քեզ քարկոծեն
Քո թշնամիք և... բարեկամք.
Անոնց համար պատրաստի չե՞ն
Քո ժպիտը և արհամարհանք...

Բաղդե՛ս, ունինք և Գրակքոսյանք,
Մովսեսք նաև մեզ պակաս չեն,
Որոնց օրենք և պատվիրանք
Քաշկըռտական քերականք են:

Թող օրինակ իրենց առնուն

11 **Չրագղան**, Օրվան կյանքը. Տիկին Թագուիի Մելիք-Ազարյանց, «Արևելք», լրագիր, Կ. Պոլիս, 1885, թ. 339, 18 փետրվարի:
12 Գիրքը տպագրվում է Թ. Շիշմանյանի մահից հետո՝ 1889-ին:
13 Տես ԳԱԹ, Ծերենցի ֆոնդ, 2/II, «Առ Տիկին Մամուրյան», 23 հունվարի, 1877 թվակիր նամակը:

Քու խիստ ոճը՝ պարզ կորովի,

Եվ թող տեսնեն թե ներշնչմունք
Պետք է սրբուն միայն բողխի:

Բայց մանավանդ ինձ համար գրե,
Ինձ՝ որ քու ձեռք ու գրիչ սիրեմ.
Ինձ՝ որ զգացմունքդ ի սիրտս հրնչե,
Ինձ՝ որ քու միտք ու խոսք պաշտեմ:

Հավտա՛, աղջիկդ է կը գրուցե՛
Որ գլուխդ թեպետ կը ճերմկի,
Բայց նշենվույն կը նմանի,
Ում ծաղիկը պտղաբեր է¹⁴:

Այստեղ մի կողմից զգալի են հորն ուղղված անկեղծ հորդորները՝ շարունակելու գրական ազգանպաստ գործը, մյուս կողմից՝ գեղարվեստական ճշմարիտ երկերի համար անհրաժեշտ նախապայմանի ընդգծումը՝ ապրված զգացումն ու խոր ներշնչումը, սրտի թելադրանքը, Ֆրիկի խոսքով՝ մտքի ու հոգու ծաղկումը («Երբ կու ծաղկին միտքս ու հոգիս, լեզուս իմ հանց պըտտող կուտայ»):

Գորովագույն դատեր հորդորներն անհետևանք չեն անցնում. արդեն 1877-ի ապրիլի 3-ին Թագուհին հորեղբորորդուն՝ Չարեհին, իրագեկում է Ծերենցի անդրանիկ վեպի գրության ու վերնագրի մասին. «Հայրս... երբեմն կը գրե, ես ալ նույն միջոցին իր առջի օրվան գրածը կ'օրինակեմ: Ի՞նչ կը գրե՝ պիտի ըսես, ահա խնդիրը. և ես գաղտնիք մը պիտի հայտնեմ քեզ. հայրս հեղինակություն մը սկսած է. **Թորոս Լևոնի** անվամբ վեպ մը. հունվարի 3-ին սկսավ, կեսը անցած է. այս միայն քեզի համար է, լռենք: Մեծ մտածմունքներես մեկն ան է հիմա, շարունակ հորս կ'ըսեմ թե ե՞րբ պիտի լմնա, գրիչը ձեռքը կուտամ, ամա՛ն, շուտ ըրե՛, կ'ըսեմ, և երբեմն ալ կը նեղացնեմ: Եթե ինձ հարցնես՝ շատ աղեկ, օգտակար, ազգային ոգվով լի և հետաքրքրաշարժ վեպ է: Բայց ես այնչափ հայրս և իր գրածները կը պաշտեմ որ կը վախճամ իմ դատողություններես»¹⁵: Իսկ 1878-ի փետրվարին տիկին Մամուրյանին գրած նամակում Թագուկը խոստովանում է, որ ինքը հնարավոր բոլոր պայմաններն ստեղծել է հոր համար, որպեսզի վերջինս կարողանա ստեղծագործել. «Ամեն առտու կ'ելնեի՝ գործեն դառնալեն վերջը **Թորոսը** կ'ըսեի և թուղթերը ձեռքը կուտայի, երբ գլուխ մը ամբողջանար մեկեն կ'օրինակեի, վասնզի կը վախճայի որ եթե թողում չի գրե»¹⁶:

Հիրավի, Ծերենցը «Թորոս Լևոնի» ավարտում է 1877-ի ապրիլի վերջին և լույս ընծայում նույն թվականին Կ. Պոլսում: Պատմավեպն ընդունվում է բացառիկ ջերմությամբ՝ հավասարապես լայն արձագանք գտնելով հայության երկու հատվածներում: Գրքի առաջին բարեկամներից էր Ղևոնդ Ալիշանի արժանավոր կրտսեր եղբայրը՝ եվրոպական դրամագիտական մի քանի ընկերությունների պատվավոր անդամ Սերովբե Ալիշանը: «Դուք **Թորոս**ին հավներ եք,- գրում էր

14 ԳԱԹ, Ծերենցի ֆոնդ, 20/1:

15 Նույն տեղում:

16 Նույն տեղում:

նրան Թագուհին,- Չեր հավանումը իմ սիրտս հանգչեցուց. Ալիշան մը երբ ըսե գրքի մը համար «մեր նոր մատենագրության մեջ տեղ մը պիտ ունենա միշտ»՝ այդ գիրքը երջանի՜կ է: ...3 ամիս անով ապրեցա. ամեն առտու երբ ելնեի՝ առջի գործս էր հորս գրասեղանին մոտենալ, գրածը կարդալ, զայն օրինակել. և թե որ ոճի պզտի ne'gligencesներ (անտեսումներ.- Ալ. Մ.) սպրդած են, բոլոր հանցանքն իմ շտապելուս է»¹⁷: Իսկ որոշ ժամանակ անց արդեն Թիֆլիսում գտնվող Թագուհին իրենց ընտանիքի նույն հավատարիմ բարեկամին 1879-ի հունվարի 31 թվագրված նամակում պատմում է թիֆլիսահայ միջավայրում գրքի ջերմ ու լայն ընդունելության մասին. «Դուք որ **Ծերենցի** ճշմարիտ բարեկամն եք՝ պետք է գիտնաք թե **Թորոս** ա՛յն աստիճան ազդեցություն ըրած է այստեղ (Թիֆլիսում.- Ալ. Մ.) որ զիմնագ զացող աշակերտեն սկսյալ մինչև հայ խմբագիրը և Ազուլիսի շաքար ծախողեն որ կ՛ըսե թե Ազուլիս ալ դրկած է քանի մը օրինակ՝ մինչև քաղքիս նշանավոր տիկնայք կարդացած են»¹⁸:

Հայ գրականությունը մեծ չափով դարձյալ Թագուհուն է պարտական Ծերենցի հաջորդ՝ «Երկունք Թ դարու» զուլագործոց երկի գոյության համար: Դստեր գրառումներից պարզվում է, որ հայրը Կիպրոսում սկսում է աշխատանքը հաջորդ վեպի վրա և այն լույս ընծայում Թիֆլիսում 1879-ին՝ հետևյալ ազդեցիկ ընծայականով. «Քեզ՝ որդյակ իմ սիրելի, ուրախություն իմ և մխիթարություն, որ երբեմն ի սուգ, ի լուռություն և ի միայնություն մեր երկուսին կենաց տխրության, հորդ հեղզ գրիչը ոգևորեցիր գրելու զԹորոս, ա՛ն, ընդունե ի նվեր, որ զիս հորդորեցիր՝ այս Երկունք, ձա՛յն սրտի հայրենի հառաչանաց Ծերենցիս: 1879, Հունիս 1. Տփլիս»¹⁹:

Մեկնաբանությունը թերևս ավելորդ է. վիպասանը բացեիբաց մատնանշում է երկի ծննդյան անմիջական ազդակը՝ դստեր հորդորը... Թագուհու՝ Ծերենցի վրա ունեցած խոր ներշնչանքի փաստն է արձանագրել նաև Արփ. Արփիարյանը՝ գրելով. «Կ՛ըսեն թե ամեն ընտիր հեղինակ զինքը ներշնչող մի հրեշտակ ունի. ...ո՞ր ներշնչող ավելի մաքուր և սուրբ է քան այն աղջիկ որ հոր մը ցրտանալ սառած սիրտը ջերմիկ կը պահե, թռիչ կ՛ընծայե նորա երևակայության, և կը պարզե նորա առաջ մտավոր ընդարձակ հորիզոններ: Ծերենցի ներշնչարանը յուր աղջիկը եղավ, և **Երկունքը** անջինջ կը պահե այդ օրերու հիշատակը, որո պարտինք **Թորոս Լևոնին**»²⁰:

Հայր ու դուստր Շիշմանյանները 1878-ի նոյեմբերի 18-ին ժամանում են Թիֆլիս ու սկսում բնակվել Ճավճավաձե փողոցի թիվ 17 տանը: Ժամանակակիցների հայացքից, ինչպես արդեն տեսանք, չէր կարող վրիպել «կրակ ու կայծակ ծերունի» հոր և օրավուր ծաղկող «աղավնի, հեզ և նագելի» դստեր գեղեցիկ պատկերը: Նրանք կարծես յուրօրինակ հոմանիշներից ու զարմանալի հակամիջներից կազմված աննախադեպ էակներ էին, հակադրամիասնություններ՝ այնքա՛ն չքնաղ, այնքա՛ն ազդեցիկ և այնքա՛ն տարաբախտ... Ահա մի հատված Ծերենցի թիֆլիսյան մտերիմներից մեկի՝ Ավետիք Եզեկյանի արտասանած դամբանական ճառից. «Հիշեցե՛ք այն աշխույժ, այն վառվռուն, այն յուր զգացումներովն ու գրուցատրությամբը կրակ ու կայծակ ծերունին յուր աղավնի,

17 Նույն տեղում, 22/1:
 18 Նույն տեղում:
 19 **Ծերենց**, Երկեր, 3այ դասականների գրադարան, Եր., «Սովետական գրող» հրատ., 1985, էջ 223:
 20 **Յրագրան**, Օրվան կյանքը. Տիկին Թագուհի Մելիք-Ազարյանց, «Արևելք», լրագիր, Կ. Պոլիս, 1885, ք. 339, 18 փետրվարի:

հեզ և նազելի աղջկան հետ մեր ընտանեկան շրջաններում, մեր խնջույքներում, մեր գրական գիտական հանդեսներում: Տոն էր մեզ համար, կատարյալ վայելք՝ տեսնելն այդ ծերունիին յուր բազմադիմի և անհուն հմտությամբ, յուր հայրենյաց անցյալի և ներկայի ընդարձակ գիտությամբ և յուր անկեղծ, խորարմատ և հզոր զգացումներով առ այն ամենայն, որ ազգինն էր և հայրենիքին. որ ազգինն է և հայրենիքին և որ ցանկանում էր լինել ազգինն ու հայրենիքին... Ձմայլանք էր տեսնել մի աղջիկ՝ գլխովն սքանչելի գեղեցիկ և աչքերն իմաստության կայծերով լի, մաքուր և նուրբ հայախոս, յուր հմտության պաշարներով, որ սիրելի հրապույրքով վարագուրել գիտեր համեստության քողի տակ, յուր հոր փոքրիկ կտորը, ոչ որոտում էր, ոչ մրրիկ հանում, այլ յուր հոր կողքին՝ նորա որոտումներից ու մրրիկներից ետ՝ խաղաղություն և հեզիկ համդարտություն յոթնգունի ծիածանն էր»²¹:

Թագուհին, ով իր նամակներից մեկում տիկին Մամուրյանին անկեղծորեն գրել էր, թե իր «սիրտը, հավտա ինձ, իշխաններուն չէ որ կ'սպասե», քանի որ «Ռուսիանյան իշխաններ չի կան որ աչք տնկեն», Թիֆլիսում 1879-ի փետրվարին ամուսնանում է հենց իշխանի՝ իր խոսքերով ասած՝ «աչքերը շատ աղվոր», «պատվական մարդու»՝ մեծահարուստ Ալեքսանդր Մելիք-Ազարյանցի հետ: Վերջինիս՝ պոլսեցի մտավորական գեղեցկուհու հետ ամուսնությունը, ինչպես երևում է Թագուհու մի նամակից, շարժել է Թիֆլիսի մեծահարուստ բազմաթիվ օրիորդների գայլույթն ու նախանձը. «...Թիֆլիսի օրորդները վախսիմ թե շատ լավ աչքով չէին նայեր ինձի, վասնզի շատ փողավոր աղջիկներ իրեն առաջարկված և մերժված են: Ինք թիֆլիզեցի չէ, այլ գարապաղցի (հին Սյունյաց), կ'երևա թե իրավացի կամ անիրավ այս քաղցքիքը չի սիրեր»²²: Ընտանեկան նոր՝ ճոխ կենցաղն ու անհոգությունը, սակայն, չեն շլացնում բարեկիրթ գրագիտուհուն, հանգամանք, որը չէր կարող չնկատվել ժամանակակիցների կողմից: Եվ ահա նրանցից շատերն են մատնանշում Թագուհի Շիշմանյանի բնավորության մի «սքանչելի հատկությունը»՝ զարմանալի համեստությունը: Գրական անուրանալի ձիրքով օժտված աղջիկը, հանգամանքների բերումով ապրելով հայոց մշակութային երկու խոշոր կենտրոններում՝ Կ. Պոլսում ու Թիֆլիսում, ամենուր շրջապատված լինելով երևելի հոր մտերիմ նշանավոր մտավորականներով, ովքեր առիթը բաց չէին թողնում՝ գովելու նրա տաղանդն ու շնորհքները, և դառնալով հանրաժանոթ տոհմիկ երիտասարդի տիկինը, բոլոր դեպքերում մնում էր ճշմարիտ արվեստագետին բնորոշ չափի ու համեստության սահմաններում. «Համեստ էր յուր տաղանդին համար. կարծես կ'երկնչեր զգալ յուր ներքին արժեքն: Ո՛րքան կ'աղաչեինք զինքն ավելի հաճախ գրել. կը փափագեր, բայց խույս կուտար: Կարծես թե չէր ուզեր հավատալ որ յուր գրածներն ո՛նէ արժեք մը ունեն»²³:

Արփ. Արփիարյանից մեզ է հասել մի հուշաբեկոր, որը նորից վկայում է Թագուհու գնահատելի համեստության մասին: Արևմտահայ գրագետը պատմում է, որ Թիֆլիսում գտնված ժամանակ (հավանաբար 1884-ի կեսերին) ինքն այցելել է Մելիք-Ազարյանցներին, և իր ու Թագուհու միջև տեղի է ունեցել հետևյալ խոսակցությունը.

«Օր մը Տփղիս ինձ կ'ըսեր.

21 Ծերենց, Երկունք Թ դարու, Բաքու, տպարան «Արոր», 1895, էջ Ե:

22 ԳԱԹ, Ծերենցի ֆոնդ, 22/1:

23 Գրագուհան, Օրվան կյանքը. Տիկին Թագուհի Մելիք-Ազարյանց, «Արևելք», լրագիր, Կ. Պոլիս, 1885, թ. 339, 18 փետրվարի:

- Մի նամակ ընդունած եմ. և կը հավելուր, գլուխն հակելով այն շնորհալի ժայիտին ներքև որ իրեն միայն հատուկ էր.

- Շատ փաղաքշական, երևակայեցե՞ք ուստի՞ց է:- Աղեքսանդր, մի՛ ասի:

Մի քանի անուններ տվի, բայց ավելցուցի.

- Տիկին, չեմ գիտեր ո՞ր անուն արժանի է ձեզ այնքան գոհունակությամբ պատճառելու:

Երբ գայս ըսի ինձ երկնցուց նամակ մը սև շրջանակներու մեջ. ստորագրությունը նայեցա և գլուխս խոնարհեցուցի հարգանք: Օտյան է.ֆ.ի (Գրիգոր Օտյանի.- Ալ. Մ.) ստորագրությունն էր, մին այն նամակներն զոր Օտյան է.ֆ. միայն կրնա գրել, և որք կարող են շատ տառապանքներ մոռցնել տալ հեղինակի մը:- Երբեմն ինձ այնպես կը թվի թե արդի երիտասարդներն շատերը կը գրեն այն հույսով և փափագով որ արժանի լինին Օտյան է.ֆ.ենտի մի քանի քաջալերական խոսք լսելու: ...Ստույգ է որ Օտյան է.ֆ.ենտի յուր քնքույշ նամակներու մեջ քաջալերություն կարդալն շատ անգամ անձնական պարտականություն կը համարի. բայց խիստ ապահով էի որ այս անգամ գրած էր Տիկին Մելիք-Ազարյանցի ո՛չ թե զնա քաջալերելու նպատակով, այլ «Գարնան մի ասուլան» իրավցնե տպավորություն գործած էր յուր վրա: Միրած էր այդ գիրքն ու գրած էր նամակն, սրտեն ու մտքեն թելադրյալ ոգվով:

- Խնդրեմ, Տիկին, թույլ տվեք ինձ օրինակել այդ նամակն, ըսի:

- Ի՞նչ պիտի ընեք:

- Երբ ձեր գործերուն վրա ընդարձակ գրեմ, այդ նամակն իմ հողվածիս գեղեցիկ մեկ զարդը կը լինի:

- Շնորհակալ եմ. բայց կ'ուզեք որ ամեն ոք ենթադրե թե ես այնքան պարծենկոտ եմ որ մինչև իսկ այսպիսի նամակ մը ձեզ հանձնած լինիմ՝ զայն հրապարակ հանելով փառավորվելու նպատակով:

Այս խոսքերուն մեջ ակներև կը տեսնեի այն համեստ և փառքե խույս տվող



Եղիազարովների տունը Թիֆլիսում Վելյամինովսկայա 16, այժմ՝ Շալվա Դադիանի 14: Այս պալատից, ուր բնակվում էր Ալ. Մելիք-Ազարյանցի ընտանիքը, վերջին անգամ հրաժեշտ են տվել Թագուհի Շիշմանյանին:

Տիկին Մելիք-Ազարյանցն: Ներելի չէր ինձ այլևս պնդել: Ընդունեցի յուր փափուկ նկատողություններն: Կրնայի՞ գուշակել թե այդ մամակին այսքան շուտ պետք պիտի ունենամ»²⁴:

Յավոք, մինչ օրս մեզ անհայտ է Թագուհի Շիշմանյանի նկատմամբ «հայրական գորով մը տածող» Գր. Օտյանի մամակի ամբողջ բովանդակությունը, բայց Արփ. Արփիարյանի ակնարկներից երևում է, որ այն արևմտահայ հանրային-քաղաքական ու մշակութային կյանքի նշանավոր գործչի՝ տաղանդավոր գրագիտուհու նորավեսյը ողջունող ու արժևորող առաջին ծանրակշիռ խոսքերից էր:

Այն, որ Թագուհի Շիշմանյանը, հիրավի, համեստագույն անձնավորություն էր, երևում է նաև «Գարնան մի ասուպի» ինքնագրի սկզբնամասի՝ մինչ օրս անտիպ գրությունից. «Վեպ մը, որ դեռ անուն չ'ունի, որ ո՞վ գիտե թե պիտի վերջանա՞, և ո՞վ գիտե պիտի ունենա՞ ապագա մը, փոքրիկ ապագա մը...»: Այս տողերը գրվել են 1883-ի հունվարին: Ինքնագրում հեղինակը վկայում է, որ երկն ավարտել է մարտի 30-ին և սկսել օրինակել ապրիլի 7-ին: Մաքրագիրն ավարտել է ապրիլի 27-ին և գրել. «Վեպն ալ այնչափ փոքրիկ եղավ, որ բնականաբար փոքր ապագա պետք է ունենա»²⁵: Այնուհետև իր երկին տվել է պայմանական մի վերնագիր՝ «Գարնան անուրջը»:

Կարճ, ողբերգականորեն շատ կարճ տևեց Թագուհի Շիշմանյանի երկրային կյանքը. դուրյանական «երկնքի հիվանդությունը»՝ թոքախտը, բույն էր դրել նաև այդ զգայուն ու նուրբ հոգու կրծքում: Նրան չեն կարողանում փրկել ո՛չ լավագույն բժիշկներն ու առողջարանները և ո՛չ էլ հոգատար ամուսինը՝ ազգային բարերար Ալեքսանդր Մելիք-Ազարյանցը²⁶, մարդ, ով սերտ կապերի մեջ էր գրական շրջանակների հետ ու եռանդով մասնակցում էր Թիֆլիսի մշակութային կյանքին, հաճախ էր նյութական ու բարոյական օգնության ձեռք մեկնում Բաֆֆուն և վերջինիս մահից հետո էլ դառնում է նրա որդիներից մեկի խնամակալը:

1885-ի հունվարի վերջերին և հաջորդ ամսին արևելահայ ու արևմտահայ պարբերականները գուժեցին Ծերենցի հրաշալի դատեր վախճանը: «Թիֆլիսի ընտիր Հայուհյաց դասը կորցրեց յուր անդամներից մեկին,- ցավով գրում էր Թիֆլիսում լույս տեսնող «Մեղու Հայաստանի» լրագիրը:- Ամսույս 28-ին կատարվեցավ տիկին Թագուհի Մելիք-Ազարյանցի (դուստր դոկտոր Շիշմանյանի) հուղարկավորության հանդեսն: Մահը կարճել էր նորա կյանքը թոքախտով Սուխումում²⁷: Բավական մեծ բազմություն կանանց և տղամարդոց հարգել էին հանգուցելու հիշատակը իրանց ներկայությամբ: Պատարագիչ Ս. Առաջնորդն էր: Վանքի բակում հանգիստ տալիս, մեծ. պ. Եզեկյանցը կարդաց համառոտ և ազդու ճառ. հանգուցելու բարի հատկությունքը հիշելով, իբրև գթոս մոր, իբրև անգին ամուսնու և իբրև ծնողասեր զավակի: Մի քանի կաթիլ արտասուք յուրաքանչյուրի աչքերից եղան վերջին հրաժարական ողջույնը հանգուցելույն»²⁸:

Ամենից սրտառուչը, սակայն, թերևս «Արևելյան մամուլ» հանդեսի խմբագրի

24 Նույն տեղում:

25 ԳԱԹ, Ծերենցի ֆոնդ, 27:

26 Ալ. Մելիք-Ազարյանցը վախճանվեց տիկնոջից 38 տարի հետո՝ 1923-ին:

27 Ծերենցի առաջին կենսագիրներից մեկը՝ Թ. Ջաքարյանը, գրում է, որ Թագուհի Շիշմանյանը «տարածամ մահվամբ վախճանվում է երկունքի մեջ», տես «Արաքս», հանդես, Ս. Պետերբուրգ, 1888, Գիրք Բ, մայիս, էջ 122): Մեզ արժանահավատ է թվում, սակայն, ցավալի կորստին անմիջական ականատես «Մեղու Հայաստանի» լրագրի թղթակցի հաղորդած տեղեկությունը:

28 «Մեղու Հայաստանի», լրագիր, Թիֆլիս, 1885, ք. 8, 31 հունվարի:

Александръ Меликъ-Азарьянцъ и докторъ Іосифъ Шишманянцъ, извѣщая о смерти жены перваго и дочери послѣдняго, Такуи, послѣдовавшей въ г. Сухумѣ, 22-го сего января, просятъ родныхъ и знакомыхъ пожаловать на выносъ тѣла покойной въ кладбище въ домѣ Егиазарова, на Вельяминовской улицѣ, № 16, въ Ванскій соборъ. Выносъ тѣла послѣдуетъ въ 10 часовъ утра 28-го сего января, въ понедѣльникъ. 193 (2) 1.



Թագուհի Շիշմանյանի մահագրը Թիֆլիսի «Կավկաս» պաշտոնաթերթում,
26.01.1885, N 25:

կողմից գրված մահագրն էր՝ պարուրված խոր կսկիծով, հարազատի ջերմ սիրով, անգամ բանաստեղծականության հասնող քնարական շնչով: Եվ դա բնական էր. Ծերենցն ու իր դուստրը Մամուրյան ընտանիքի ամենամտերիմ մարդկանցից էին, ամենացորդ համախոհներն ու հավատարիմները: Թագուհու նամականուց՝ հիմնականում ուղղված Մատթեոս Մամուրյանին, նրա «պինտ անուշ» տիկնոջն ու Հրանտ զավակին, ակնառու է այն ջերմ սերն ու նվիրվածությունը, որոնք առկա էին Շիշմանյանների ու Մամուրյանների միջև: Հաշվի առնելով վերոնշյալ մահագրում տեղ գտած Թագուհի Շիշմանյան մարդուն ու գրական գործչին տրված դիպուկ բնութագրումները՝ հարկ ենք համարում այն մեջ բերել ամբողջությամբ. «Լրագիրները բերին մեզի Կովկասեն ողբալի մի գույժ: Մահն իր սև քողով ծածկեր է ընտանեկան, գրական ու ազգային շրջաններուն մեջ իր ընտիր ձրյուք փայլող անձնավորություն մը, այս է՝ Տիկին Թ. Մելիք-Ազարյանց, դուստր Մեծապատիվ Հ. Շիշմանյանի: Քանի՜ ծանր ու անդարմանելի է այս հարվածն ոչ միայն իր վշտաբեկ ամուսնույն, իր մատղաշ զավակներուն, իր ծերունագարդ հոր, այլ նաև Հայ ընկերության և գրականության:

Գեղեցիկ դաստիարակությամբ և ուսմամբ զարգացած, սրտի ու մտքի շնորհքով լի օրիորդ Թագուհի՝ երբեմն զարդ ու պսակն Օրթագյուղի աղջկանց չքնաղ ընկերությանց մեջ, իր հոր աչքին լույսն ու հոգվույն կենսատու շունչն, իբրև տատրակ տարագիր՝ Հայաստանի օդույն, ջրույն և ծաղիկներուն կարոտ, Պոսֆորի ափունքեն կ'քռի իր գորովալի հոր հետ այն աշխարհն ուսկից Արարատա ձյունափայլ սարերը կ'երևին, և կ'հուսա գտնել այն երջանկությունն որու արժանի էր, իր շնորհաշուք և համակրելի բնավորությամբ, իր ընտանեսեր և պարզասեր բնավորությամբ: Եվ իր հույսը կ'պսակվի տոհմիկ երիտասարդի մը, Մելիք-Ազարյանցի հետ, և իր ընտանեկան բույնը կ'ծաղկի, կ'վայելել կենաց անպատում անուշություններն: Բայց, ավա՜ղ, ինչու՞ այնքան շուտ սահին այդ բարեբաստիկ օրերն, ինչու՞ այնքան շուտ թռուփն այդ երանության ծաղիկները: Տիկին Թ. Մելիք-Ազարյանց՝ նման մանիշակի՝ համեստ և անույշ, ինքն իրեն ստեղծած էր հատուկ մի աշխարհ որու մեջ կ'ապրեր անշշուկ ու անձայն, սակայն իր հոգին և նուրբ իմացականությունն, ազնիվ զգացումներու, զվարթուն ներշնչումներու և գեղեցիկ ու բարձր գաղափարներու զանձեր, անծանոթ չէին զինքն ի մոտուստ ճանչցող

ՕՐԻՊՐԻՄ

10
2010
հոկտեմբեր-դեկտեմբեր 4 (32) տարի, քիվ 4 (32) հոկտեմբեր-դեկտեմբեր 2010

Բ (Ը) տարի, քիվ 4 (32) հոկտեմբեր-դեկտեմբեր 2010
ԿԵՄ համահայկական հանդես

սիրելիներուն և ծանոթներուն:

Իր գրիչն՝ թեև իր սրտին պես զգայուն, թագուն ու ճոխ, հագիվ մերթ ընդ մերթ կ'արձակէր միայն նշույլներ Հայ գրական աշխարհին վրա, իսկ իր վերջին երկն, **Գարնան մի ասուպն**, թեև համառոտ ու սուղ նորավեպ, մարդկային կենաց մի փայլուն ու զեղուն մանրանկարն է, և թերևս վաղամեռիկ հեղինակուհիին նախազգացումներու մի տխուր արտահայտությունը: Վասնզի Տիկին Մելիք-Ազարյանց երկցավ մեզ իբրև գարնան մի ասուպ՝ կենաց մութ կամարին վրա գծեց շողեր ու կայծեր և ապա սլացավ անշուշտ լավագույն աշխարհ մ' ուր ոչ ցավ ու վիշտ, ոչ պատրանք ու լալում կա, թողլով մեզ իր լուսագիծ և գեղաշնորհ հիշատակն, որ ինչպես ընտանեկան՝ նույնպես Հայության սրտին ու մտքին մեջ պիտի մնա կենդանի ու անմոռաց»²⁹:

Հայ գրական երկնականարից ասուպի պես անհետացած գրագիտուհու կորստին արձագանքեցին նաև Արփիարյան եղբայրները: Նրանցից ավագը՝ Արփիարը, իր գրած մահախոսականն սկսելով «Երբ տունը պատրաստ է, մահը ներս կը մտնե» արաբական սարսռազդու առածով, դրվատանքի դիպուկ խոսքեր է ասում Թագուհի Շիշմանյան մարդու և վիպասանուհու մասին, ներբողում նրա խոհուն միտքն ու նուրբ գրիչը՝ հեղինակին համարելով համազգային արժեք. «Տիկին Մելիք-Ազարյանցի մահը ազգականներու և բարեկամաց անձուկ շրջանակի մը մեջ միայն վիշտ ազդելու հանգամանքը չունի. այդ մահը իրապես ցավ կը պատճառե հայ մատենագրության, հետևաբար ամեն Հայոց: Մեր հոգետանջ կարոտությանց համար մատենագրությունն ու մատենագիրք ունին այն կոչումն, զոր կրոնքն ու քահանայք ունին տառապյալ հոգիներու համար: Մեր ժամանակը կաթոգին սիրով կը սիրե այն վիպասանությունը, որ խորագնին աչքով, գթալիք սրտով կը քննե մեր հոգեկան պետքերը, կ'որոնե մեր ցավոց պատճառները: Մեր նորածին վիպասանությունը հայ ժողովուրդին հրապուրիչ և սիրելի ընծայելու կարևոր ամեն հատկություններով օժտյալ էր Տիկին Մելիք-Ազարյանց: Յուր սրտին մեջ կը գտներ գթության և կարեկցության տենչը, և միտքը մշակյալ ա՛յնքան խնամոք, օժտյալ ա՛յնքան զարդերով, կարող էր գտնել ամեն կարգի շերտեր, որով մեր սրտերուն խորը կրնար թափանցել տալ այն ամեն զգացումներն, որոնցմով տոգորյալ էր ինքը: ... Ինչպես կյանքի՝ նույնպես և գրականության մեջ կ'ընթանար շնորհալի, հուշիկ, բայց գեղաճեմիկ քայլերով»³⁰: Արփ. Արփիարյանը հավելում է, որ «տաղանդավոր և ազնիվ» տիկնոջ մահը սգում է ամբողջ Թիֆլիսը. ««Ի՛նչ կին, ի՛նչ կին»,- կ'ըսեր ամեն ոք»³¹:

1892-ին Թիֆլիսի Խոջիվանքի գերեզմանատուն այցելած Տիգրան Արփիարյանը ևս հիշատակի ջերմ տողեր է նվիրել «իր գրական մելամաղձոտ Մենիկ անունովը» հայտնի Թագուհի Շիշմանյանին՝ այն «համակրելի տիկնոջ որ Պոլստ հայ աղջկանց պատիվն եղավ Թիֆլիզու զարգացած դասուն մեջ»: Հրապարակախոս, քննադատ և նորավիպագիր կրտսեր Արփիարյանն իրեն հատուկ բարեխոսությամբ է նկարագրում գրագիտուհու գերեզմանը. «Մարմարյա կոթողին ճակատն արձանագրված է իր գրական անունը, և ստորև իր երկու երկերն (մեկն ինքնուրույն, մյուսը՝ թարգմանաբար.- Ալ. Մ.), ոտանավոր մը, ամուսնույն վիշտն ու հարգանքը.

29 «Արևելյան մամուլ», հանդես, Չմյունիա, 1885, փետրվար, էջ 97-98:

30 **Յրագրան**, Օրվան կյանքը. Տիկին Թագուհի Մելիք-Ազարյանց, «Արևելք», լրագիր, Կ. Պոլիս, 1885, ք. 339, 18 փետրվարի:

31 Նույն տեղում:

Մ Ե Ն Ի Կ
ԳԱՐՆԱՆ ՄԻ ԱՍՈՒՊ – ԿԱՆԱՆՑ ԲԱՐՈՅԱԿԱՆ
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ
1859 – 1885

*

* *

Շողաց լուսավառ երկնքում
Եվ անցավ հավիտյան անդարձ.
Նա մի գարնան ասուպ էր:

ԵՁԵԿՅԱՆ

*

* *

«Առ Թագուհի տիկին Մելիք-Ազարյանց, դուստր Հովսեփ-Շիշմանյանի-
Ծերենց»

Պատկառոտ սիրով՝
ամուսինն
Ա. Մ. Ա.»³²:



1930-ականներին ավերված Խոջիվանքի գերեզմանատնից պահպանված Հայ գրողների
և մշակութային գործիչների պանթեոնում այսօր Ծերենցի գերեզմանը կամ նրա նոր՝
խորհրդանշական գերեզմանաքարը մնացել է մենակ:
Թագուհի Շիշմանյանի շիրմի տեղն անհայտ է:

Հանճարեղ դերասան Պետրոս Ադամյանը նույնպես գրիչ վերցրեց ու որդեկո-
րույս Ծերենցին նվիրված բանաստեղծություն գրեց՝ 26-ը չբոլորած դստեր
մահվան առիթով.

32 Արփիարյան Տ., Հավլաբար (կովկասյան հիշատակ), «Մասիս», հանդես, Կ. Պոլիս, 1892, ք. 3958, 14
փետրվարի, էջ 49:

Գիտենմ, մինչ արդ զգալի չէր
Քեզ՝ բեղմնավոր կյանքիդ բեռ.
և ոչ այլացդ թելք սպիտակ,
որք թվին օրեր, տարիներ,
աշխատանք շիկնիս արդյամբք.

զի աղջիկըդ, ճակտիդ պըսակ,
թառամած չէր
տակավին:

Գիտենմ ծերույդ դենքն հարգելի.
և կնճռոտած, ուներ ժպիտ,
զերթ վերջին շողն արևմըտի,
սփոփանաց դիտին շիթ.
որո աղբյուր՝ սիրտդ էր միայն
պահարանն այն... մարգարտի,
խնամքով պահված,
և անզին:

Մահն ալևոր ձեռքիցդ խըլեց
խոնջյալ ծերույդ գավազան.
ծաղկած սիրով քո դստեր,
միթե նորա չէ՞ր բավական
յուր մանգաղին հենարան
որ քեզ թողուց աննեցուկ,
հուսահատված
լիովին:

Ձի քեզանում մարդն ու քերթող
անմխիթար մընացին,
հայրը ողբաց յուր գավակը,
պուետն հոգվո յուր դրացին,
մուսա-դուստրը յուր սիրախանդ,
միանգամայն քնարն ու սիրտ,
ի՛ սուգ պատնած
լըռեցին:

Քո ցավերին չի կա՛ սփոփանք,
գայդ ամոքիլ չեն կարող.
միայն թե... գուցե ի՛ նըպաստ մեզ,
պետք է որ մինն աղոթող
լինի յ՛երկինս, սուրբ ողջակե՛զ.
դռան մեջ բանա նախապես,
դեռ չի գաղթած
մեր հոգին:

Այս համոզումն գուցե սփոփե
մեզ, յ'այս ցավոց մահավայր.
որն որ չի տար սընունդ բարվույն,
և կարծրասիրտ ինչպես ժայռ,
հոգվո, մտաց ազնիվ յերկիրն,
խեղդե յուր մեջ, զինչ խորթ մայր,
չը զարգացած
տակավին:

Պատկառելի վիպասանիդ
մընում է արդ շարադրիլ
նորա կենաց գողտրիկ վեպը
և սրտումըդ տպագրիլ.
հոգվո աչոք կարդալ սփոփվիլ,
այնտեղ հիացմամբ միշտ նայիլ
յուր սիրամած
պատկերին:

Որո վըրա կը փայլեին
առաքինի նըշույլներ,
որդիական սիրո գորով,
անքուն գիշերցիվ հետքեր.
երբ որ գրական լուրջ երկանց
օգներ, նստած հորը քով,
ծառն ծաղկաբաց՝
ընդ պտղին³³:

Ծերենցը... Թագուկի կյանքի վերջին օրերին շարունակ նրա սնարի մոտ էր. «Ծեր հայրը՝ որ կենաց տարուբեր դժբաղդությանց տարեր էր և այնպես համոզված թե կա ճակատագիր՝ Նախախնամության ձեռոք դրոշմյալ և անտի խուսել չիք հնար մարդուս,- իր մասին պատմում է Ծերենցը,- ընդունեցավ այդ խիստ հարվածը այն վերջին օրերուն յորում մարդկային համենայն կարողությանց անհույս՝ միայնակ հիվանդապահի պաշտոն կը կատարեր ի սնարս յուր մեկ հատիկ զավկին, մինչև այն վայրկյան յորում փակեց նորա երբեմն այնչափ լուսավիր և հետո այնչափ նվաղյալ աչքերն ի քուն հավիտենից»³⁴:

Ծերենցին արդեն այլ բան չէր մնում, քան հրաժեշտ տալ սիրասուն դստերը՝ սպասելով իրենց երկնային հանդիպմանը... Այդ մտորումների մեջ՝ հայրը վշտաբեկ արտով մի ազդեցիկ բանաստեղծություն է նվիրում իր «միակ սփոփանք» դստեր հիշատակին՝ «Մնաս բարյավ» խորագրով.

**Մընաս բարյավ, որդյակ սիրուն,
քո հորդ միակ սփոփանք.
Ճակատագիրն այնպես վճռեց**

33 Ադամյան Պ., Առ պատկառելին Ծերենց. յուր վաղամեռիկ և բարեհիշատակ դստեր. Տիկին Թագուկի Մելիք-Ազարյանցի մահվան առթիվ, ինքնագիր, ԳԱԹ, Ծերենցի ֆոնդ, 51:

34 Ծերենց, Առաջաբան Էռնեսթ Լըկուվիեի «Բարոյախոսություն զկանանց» աշխատության, Լըկուվիե Էռնեսթ, Բարոյախոսություն զկանանց: Թարգմանեց յթերորդ տպագրութենն Թագուկի Շ. Մելիքազարյանց, Կ. Պոլիս, տպագր. Ն. Կ. Պերպերյան, 1889, էջ ԺԲ-ԺԳ:

զի նորա լաստ հարածուփ
Յաշխարհիս ծով ի տղա տիոց
միայնությամբ տատանի:

Ձերկար ուղին հատյալ երթա
նավահանգիստն անծանոթ.
Եվ ո՛ր գիտե՛՜ ո՛ր մըրըրկաց
մընան նմա սպառնալիք,
Յորոց ըզքեզ գերծ պահպանել
եղեն սըրտին յուր մաղթանք:

Ցարդ շատ եղև օտար աստեղց
և ի ներքո և յափունս
Նորա նավուն հեցյալ ի կողս՝
տարուբերյալ շրջեցար,
Լըքյալ երբեմն հեշտալի դեմս,
և զընկերաց քաղցր բարբառ:
Իսկ մինչ յայժմուս գողտր գավակաց
կայտռեն ըզքև թռիչք ոտից,
Եվ քաղցրաձայն մըրմունջք՝ մայրի՛կ,
մայրի՛կ գոչեն անդադար,
Թող ըզպապիկն զի երթիցե, յոր վայր իցե
Նախախնամին հրաման³⁵:

Երեք որբուկներ (Արփինե, Լուսիկ, Թագուհի) թողած դստեր մահը կաթվածահար է անում ծերունագարդ հորը. Ծերենցը երեք տարի հետո վախճանվում է՝ ամփոփվելով սիրասուն դստեր գերեզմանի կողքին: Վաստակած գրողի կյանքի վերջին տարիների տառապալից շրջանից մեզ է հասել նրա՝ Գր. Օտյանին ուղղված մի հուզիչ նամակը: 1887-ի 3/15 հուլիս թվակիր այդ նամակից հասկանալի է դառնում, որ ճակատագրի անողոք հարվածներից կքած պատկառելի վիպասանը, այնուամենայնիվ, կյանքին շարունակել է նայել փիլիսոփայորեն. չի խռովել Աստծուց, պահպանել է մի խորունկ հավատ գալիքի՝ «ետքի կյանքի» նկատմամբ և ունեցել է սփոփանք՝ «երթալ» դեպի «նոր կյանք», ուր իրեն եմ սպասում իր սիրելիները.

«Միրելի Օտյանդ իմ


Ահա քեզ անգամ մ'ալ կը գրեմ աս տողերը. ամսույս 13ին Վարդավառի երկրորդ օրը վերջապես ունեցա կաթվածի հարված մը և հիմա երբ աջ ձեռքով քեզ կը գրեմ, ձախը իմս չէ. թեպետ կես մարդ, բայց փա՛ռք Աստուծո, այնպիսի ազնիվ անձանց կամ շրջապատյալ որք որ զիս ամեն ամեն կերպիվ կը խնամեն և այս ողորմելի վիճակիս ծանրությունը չեն ուզեր ինձ զգացնել տալ. միթե այս նաև Աստուծո մեկ շնորհքը չէ՞. ահա անոր մի շնորհքն ալ այն չէ՞ որ որքան որ կը թողում աստ սիրելիք և մտերիմք՝ անդ ևս ուր պիտի երթամ պիտի գտնեմ զանոնք որ ինձ կ'սպասեն և նոր կյանք մը որուն վարագույրը վերջապես պիտի բացվի և որո համար այնչափ հետաքրքիր էի այսչափ երկար տարիներ: Գու ուր սրտի մարդ ես, լավ կը հասկնաս այս իմ վերջի խոսքերս. Աստված զքեզ պահե միշտ իր շնորհաց

35 ԳԱԹ, Ծերենցի ֆոնդ, 20/1:

մեջ. ողջ լեր. կը տեսնվինք հո՛ն և հոս նաև երբ Աստված շնորհե. մնաս բարյալ»³⁶:

Յավոք, հասցեատերն արդեն չէր կարող կարդալ այս նամակը, քանի որ այն Փարիզ հասավ Գ-ր. Օտյանի հոգեվարքի պահերին (1887-ի օգոստոս): Իսկ երբ քիչ անց Ծերենցն այցելում է Օտյաններին՝ մխիթարական խոսքեր ասելու իր ընկերոջ մահվան առիթով, ինքն այնպիսի ծանր կացության մեջ էր գտնվում, որ հանգուցյալի հարազատներն են ստիպված լինում մխիթարել նրան: «Խեղճ Շիշմանյան,- պատմում է Գ-ր. Օտյանի եղբորորդին և միաժամանակ որդեգիրը՝ հանճարեղ երգիծաբան Եր. Օտյանը,- վերջին անգամ մեր տունն եկավ Օտյանի մահվան առթիվ մխիթարական այցելություն մը տալու: Կաթվածահար, անկարող, իր թևերեն մտանք մինչև վեր բերելու համար. խոսք մը չկրցավ ընել, լռիկ մնջիկ նստավ և ապա սկսավ արցունք թափել, «այն ծերունիի հատուկ դառն արցունքները որոնք իրենց ցամքած ակունքին խորեն ծանր ծանր կը հոսին»: Եվ մենք ստիպվեցանք մխիթարել զինքը:

Քիչ ժամանակ ետքը մեկնեցավ Թիֆլիս իր փեսին Պ. Ա. Մելիք Ազարյանցի մոտ ուր պիտի մեռներ քանի մը ամիսեն՝ 1888 փետրվար 17ին»³⁷:



Ծերենցի մահագրը «Տիֆլիսսկի լիստոկ» թերթում, 20.02.1888:

2. Նամակներ և հուշագրություն

Թագուհի Շիշմանյանը ոչ միայն տաղանդաշատ հոր հոգևոր ներշնչանքն էր, «պահապան հրեշտակը», այլև գրական բարեխիղճ մշակ, ում անտիպ նամակներում ու հուշերում, ինչպես նաև քրոնիկներում զետեղված տեղեկություններն այսօր անգնահատելի արժեք են ներկայացնում. դրանք մի կողմից ամբողջացնում են Ծերենցի կյանքի ու գրական, հանրային-քաղաքական գործունեության պատկերը, երկերի ստեղծագործական պատմությունը, մյուս կողմից բացահայտում, ճշտում ու սրբագրում են այս կամ այն նշանավոր մտածողի դիմանկարը, կենդանագրում հայոց պատմության 1870-80-ական թվականների ժամանակաշրջանը: Եվ ուշագրավն այն է, որ բարեկիրթ գրագիտուհին այդ ճանապարհին հաճախ է դրսևորում գրական զարգացած ճաշակ ու սթափ միտք:

Թագուհի հուշերի պատառիկներից մեկը, օրինակ, ճշգրտում է Ծերենցի՝ 1875-ի ամռանը Բերայի հիվանդանոցում բժշկի պաշտոնից հեռացվելու պատճառը:

36 Օտյան Եր., Գովեսի Շիշմանյան (Ծերենց), «Մասիս», հանդես, Կ. Պոլիս, 1893, ք. 3997, 26 հունիսի, էջ 390:
37 Նույն տեղում:

Հայտնի է, որ 19-րդ դարի երկրորդ կեսին թուրքական բռնապետության դեմ ազատագրական պայքարի ուղին թևակոխած արևմտահայությունը պարտադրված էր դիմակայել նաև Արևմուտքի ճնշումներին: Ֆրանսիան ու հատկապես Վատիկանն իրենց ազդեցությունն Արևելքում գորացնելու և ժողովրդի ազատագրական պայքարը ջլատելու նպատակով ջանում էին միմյանցից օտարել ու թշնամացնել միևնույն ազգի տարբեր անդամներին: Կաթոլիկ քարոզչությունը նոր թափ է ստանում, երբ Կ. Պոլսում հայ կաթոլիկների համայնքի պարագլուխ է դառնում Անտոն Հասունյանը: Իսկ «հակահասունյան» պայքարի առաջամարտիկներից մեկը Ծերենցն էր: Եվ ահա Բերայի հիվանդանոցի ֆրանսիացի կաթոլիկ մայրապետները, իմանալով բժշկի հակակաթոլիկական պայքարի մասին, անհնազանդություն են դրսևորում, որի հետևանքով Ծերենցն ազատվում է զբաղեցրած պաշտոնից: «Երբ Թագուկ իր հորը հետ սանդուխին գլխի սենյակը մտավ, աղջիկը դուռը գոցեց և հորը վիզը պլվեցավ: Հազար հարցմունք իր անթիվ համբույրներուն հաջորդեցին երբ միանգամայն պզտի մոմ մը կը վառեր: Հայրը բժիշկ էր. Բերա հիվանդանոցի մը բժշկություն կ'ըներ. գաղղ. մայրապետք որ հոն կը հսկեին իրենց բանասրկությամբք չէին թողուր որ այդ պաշտոնը առանց արտհատնումի վարե: Ուստի հարցուց աղջիկը թե նոր **էնթրիկներ** կայի՞ն, թե թևին վերքը ինչպես էր, թե ի՞նչ լուր կար»³⁸, - հուշագրում է Թագուհին:

Ներհուն դուստրն իր նամակներում երբեմն հաղորդում է այնպիսի տեղեկություններ, որոնք օգնում են ճիշտ հասկանալու արձակագիր հոր այս կամ այն ստեղծագործությունը: Այսպես, Ծերենցը «Թորոս Լևոնի» վեպում զետեղել է մի քանի ոտանավորներ, որոնք հարուցել են Ս. Ալիշանի դժգոհությունը: Թագուհին այդ առիթով հոր միջոցով Ս. Ալիշանին տալիս է հետևյալ բացատրությունը. «Հայրս ինձի հանձնեց գրուցիլ ՚ի պատասխան սա խոսքերուդ՝ «ուրիշ անգամ ոտանավոր մի՛ մուծաներ... պատմե՛ զգացմունս, այլ ոչ վիպասանաբար քերթե...»: «Երգողը ես չ'եմ, այլ գաղթականներն են որ Կիլիկիա կը հասնին ու կ'երգեն, մեջը երգը անցելույն ժողովուրդն է որ զՌ-ուբեն կ'երգե»³⁹: Ասել է թե՛ վիպասանը նկատի է ունեցել Ռ-ուբեն Ա-ի մասին Ռ-ուբինյան իշխանության հաստատման շրջանում ժողովրդական շատ տարածված երգերը, որոնք վիպական հյուսվածքին հաղորդում են կենդանություն ու յուրահատուկ գունեղություն:

Թագուհի Շիշմանյանի հուշաբեկորները կարևոր տեղեկություններ են հաղորդում նաև Սրբուհի Տյուսաբի կենսագրության ու ստացած կրթության որոշ մանրամասների ամբողջացման տեսակետից. օրինակ՝ այն, որ ապագա վիպասանուհու հոգատար մայրը ոչինչ չի խնայել դստեր բազմակողմանի զարգացման համար. Նազը Վահանը չափազանց խստությամբ է հետևել Սրբուհու ուսումնական պարապմունքներին: Վավերականության հետ միասին այստեղ ուշագրավը նաև այն է, որ հուշագրի գրիչը երբեմն ձեռք է բերում գեղարվեստական կերպարաստեղծման հատկանիշներ, և «բնորոշները» կարծես դառնում են «պատկեր-դիմանկարներ». «Իր մայրը որ շատ խստությամբ այս աղջկան դաստիարակության հոգ տարած էր, ծանրագլուխ կին մ'էր. յուր գյուղին աղջկանց դպրոցը հիմնած էր, նույնպես Աղքատախնամ ընկերություն մը, բայց

38 Շիշմանյան Թագուհի, Անվերնագիր գրվածք, Հիշողություն, ինքնագիր, 1 մայիս, 1877, Կիպրոս, ԳԱԹ, Ծերենցի ֆոնդ, 25:

39 ԳԱԹ, Ծերենցի ֆոնդ, 2/11:

նույն իսկ այս բարեգործությանց մեջ անախորժ պիտի երևեր նա լավ դիտող անձանց, վասնզի բարեգործության լավագույն մասը՝ «Այոց վշտով վշտակրիւն» չ'ունենա: Տգեղ էր և իր միակ գեղեցկությունը բոլորովին ճերմկացած մազերն էին, որք դժբաղդաբար խիստ սև դեմք մը կը պսակէին: Գլխավորապէս հոգ տարած էր նախ իր աղջկան երաժշտության մասին, կը փակէ եղեր զայն պատկերները դաշնակին սենեկին մեջ, կարը առնելով դրան դիմաց կը նստի մինչև որ երկու երեք ժամեր հոն անցնէ դաշնակին ձայնը լսելով: Աս խնամքն ալ պարապը չ'էր գացած վասնզի ամենը կ'ըսէին թէ Օր. Վ. <ահան> լավ երաժիշտ է, և երբ Թագուկ հոն երթար և զայն դաշնակին դեմը նստած գտներ, չ'էր ուզեր որ ելնէ, համակարծիք էր բանաստեղծին որ իրեն համար կ'ըսէր.

«Լու՛ն կաց գիշերց սիրուն խոսնա՛կ
Լու՛ն կաց, կուսին երբ ՚ի դաշնակ
Երթնեկին մանու թաթիկք»»⁴⁰:

Հուշագիրն այնուհետև հավաստի մանրամասներ է հաղորդում Տյուսաբի անձնական կյանքից՝ այդ ընթացքում արտահայտելով սեփական վերաբերմունքը. «Ամենն առաջ բժիշկի մը նշանված էր, այդ նշանը ետ տրվեց բժիշկին կողմէն, վասնզի վատվում և խոսուն աղջիկը ասաբեկ դարձուց հանդարտ և խոհուն մարդը, որ մտածեց թաքուն թէ ան որ վարժած էր գովվիլ, երևիլ և շլացնիլ՝ ընտանեկան անձուկ շրջանին մեջ երջանիկ պիտի չ'ըլլար և չընէր:

Զինքը ճշմարտապէս սիրողը⁴¹ այն սիրով որ ավելի պաշտաման մը կը նմանի և միայն կատարելություն մը կը գտնէ յուր պաշտած էակին վրա Պեշ.[իկթաշեն] եղած: Չ'են գիտեր թէ աս սերը հավասա՞ր էր փոխադարձ, բայց հայտնի է թէ տխուր կյանքի մը վրա եթէ ոչ երջանկություն գտնէ երջանկության հով մը տվավ: Եվ երբ բանաստեղծը «դիմեր հուշիկ ՚ի գերեզման» Պեշիկթաշլյանի բարեկամն ամեն արգելք ՚ի գործ դրավ մինչև անոր մահը»⁴²:

Թագուկի թիֆլիսյան գրառումներն արդեն վերաբերում են արևելահայ կյանքին: Դրանցից մեկում, օրինակ, նա խանդավառված պատմում է, որ Թիֆլիսում քաջածանոթ են արևմտահայ գրականությանը, կան Ղևոնդ Ալիշանի բանաստեղծություններով սքանչացողներ, երգում են Սկրտիչ Պեշիկթաշլյանի երգերը. «Արդեն այս տեղ Պուլտ գրագետ ըլլալով Հայր Ղևոնդը կը ճանչին որ սքանչացողներ ունի, Պեշիկթաշլյանը՝ որու երգերը կ'երգեն և Ծերենց որու վեպը կարդացեր են»⁴³: Գրագիտուհին հիշում է նաև Գաբրիել Սունդուկյանի հետ առաջին հանդիպումը և դրամատուրգի խոր մտահոգությամբ արտաբերած նախադասությունը հայի ճակատագրի մասին. «Վանդակը կոտրվել է, թռչունները ցրվել են»⁴⁴:

Թագուկի Շիշմանյանի նամականիում վերջին տեղում չեն նաև 19-րդ դարավերջի հայ հանրային-քաղաքական կյանքում տեղի ունեցած իրադարձությունների հիշատակումները: Այսպէս, նա Սրբուհի Տյուսաբին

2010 հոկտեմբեր-դեկտեմբեր 4 (32) ԳԱԹ, Ծերենցի ֆոնդ, 25

Բ (Ը) ԳԱԹ, Ծերենցի ֆոնդ, 25

40 ԳԱԹ, Ծերենցի ֆոնդ, 25: Թագուկու մեջբերած չափածոն Սկրտիչ Պեշիկթաշլյանի «Աշուն» բանաստեղծության 37, 39 և 40 տողերն են:

41 Մ. Պեշիկթաշլյանը եղել է Ս. Վահանյանի հայերենի տնային ուսուցիչը և բուն զգացմունքներ է տածել նրա հանդեպ:

42 ԳԱԹ, Ծերենցի ֆոնդ, 25:

43 Նույն տեղում, 2/II:

44 Տես նույն տեղում:

հասցեագրած մի նամակում (1876, 13 հունիս) ակնարկում է սուլթան Աբդուլ Ազիզի գահընկեցության և Մուրադ 5-րդի գահակալության շրջանում Միհրդատ փաշայի՝ Գրիգոր Օտյանի հետ միասին կազմած օսմանյան Սահմանադրության քննարկման մասին. «Մի՛ կարծեք թե անտեղյակ եմք քաղաքականացյալ աշխարհե. օրագիր կ'առնենք և կ'իմանանք որ հեղափոխություն կ'ընեք առանց արյուն թափելու...»⁴⁵:

Մեկ ուրիշ նամակ էլ՝ ուղղված իր պոլսեցի դասընկերուհի Հերիզա Յուսուֆյանին (1876, 4 օգոստոս), խոսում է 17-ամյա աղջկա՝ քաղաքականությունը վերաբերող մտածելակերպի սթափության մասին: Այսպես, երբ Կ. Պոլսի լրագրերից մեկը ստահող լուրեր է հաղորդում, թե իբր Կովկասի հայերը մեծ խռովություն են բարձրացրել Ռուսաստանի դեմ, բանտարկվել է հայոց կաթողիկոսը, և փոխարքա Միխայիլն էլ այնտեղ թագավոր է հայտարարվել, Թագուկը Նիկոսիայից հեզնաբար գրում է. «Քաղաքական մասին սխալ լուրեր եղեր են՝ ի Պոլիս. և մանավանդ ազգային անտեղի լուրը գրողներն ու ծախողները սրիկա, բայց հավտացողներն ալ քիչ մը զարմանալի են. մի՞թե կարելի էր որ Ռուսիո կառավարությունը այնչափ impolitigue (քաղաքականությանն անհարիր.- Ալ. Մ.) բան մ'ըներ այն միջոցին որ ինչպես կը տեսնենք խռովությանց ժամանակ մ'է. իսկ Կովկասու հայոց **հեղափոխությունը** նույնպես անհավատալի է որովհետև Միքայել դուքսը՝ ռուս մը և ոչ սովորական ռուսաստանցի դուքս մը, այլ նույն իս կայսեր եղբայրը՝ կրնա՞ հայոց ապստամբության գլուխ ըլլալ,- մանավանդ երբ ինք ճամբորդություն կ'ընե: Աս ալ չ'էի՞ն գիտեր Պոլիս թե որ և է մեկը, նույն իսկ երբ դուքս է, չ'կրնար միանգամայն երկու տեղ գտնվիլ»⁴⁶:

Թագուհի Շիշմանյանի 1879-ին Թիֆլիսից գրած նամակները կենդանագրում են հայոց արևելյան գաղթօջախի կյանքի պատկերները՝ յուրակերպ կենցաղով ու վարքուբարքով և մարդկային հարաբերություններով այնքա՛ն տարբեր պոլսահայ միջավայրից: Նոյեմբերի 21-ին տիկին Մամուրյանին հասցեագրված նամակում նախ պատմվում են Թիֆլիսից ստացած առաջին տպավորությունները, մասնավորապես այն, որ վրաց մայրաքաղաքում գերազանցապես բնակվում են հայեր, որոնց մեջ սակավաթիվ չեն ազգասերներն ու բարեկիրթները. «Հիմա մահ ալ Վրաստան չ'է Թիֆլիս, այլ Հայաստան մը՝ ուր ազգասեր՝ կրթյալ հայեր կան, և որոնք պետք է ըսել թե մեզի՛ այսինքն հորս՝ կամ լավ ևս **Թորոսի** հեղինակ Ծերենցին մեծ սեր և համակրություն ցույց կուտան: Գլխավորապես տեսնվեցանք «Փորձ»ի խմբագիր պ. Աբգար Հովհաննիսյանցի հետ, որ կինը՝ քույրերը և գրական աշխատակիցներուն ներկայացուց մեզ. այնպես որ քանի մը զիշեր շարունակ զանազան տուներ անցուցինք»⁴⁷: Թագուկին դուր էին եկել մահ Թիֆլիսի «ազնիվ տիկիները», օրիորդների մի մասը, «պզտի չոճուխները»... Պոլսահայ աղջիկը, սակայն, մատնանշում է մահ անխուսափելի որոշ տարբերություններ, հատկապես այն, որ «նյութական մասը աս աշխարհքիս մեջ մեծ տեղ ունի», և թիֆլիսահայ օրիորդները, ի տարբերություն պոլսահայերի, բավական ազատ վարքուբարք ունեն: «Ես թեպետ հրամանքիդ պես Ամերիկա չ'եմ գացած,- գրում է Թագուկը Ս. Ալիշանին՝ ակնարկելով վերջինիս՝ դրամագիտության ասպարեզում մասնագիտացումն ավելի խորացնելու

45 Նույն տեղում:

46 Նույն տեղում:

47 Նույն տեղում:

նպատակով 1845-ին Ամերիկա մեկնելը,- բայց լսածես և քիչ մ'ալ ճամփորդությանց մեջ հանդիպած ամերիկացի ընտանիքներեն դատելով՝ այս տեղի հայ աղջկանց ազատ կերպն ու վարքը շատ կը նմանի ամերիկացվոց բարուց: Ըսենք օրինակի համար 18 տարեկան բավական լավ վիճակ ունեցող աղջիկ մը. առտուն առանձին դուրս կ'ելնէ՝ կ'երթա Scole Musicale (երաժշտական դպրոց.- Ալ. Մ.) դաշնակի դաս առնելու. անկից քաղքին մյուս ծայրը կ'երթա այս ինչ գրածախին խանութը գիրք կամ օրագիր առնլու, հետո միտքը կուգա թե այցելություն մը պետք էր ընել՝ այն ալ կ'ընէ, վերջը խելքին կը փչէ իր զարդարանքին վերաբերյալ բան մը գնել՝ կը մտնէ խանութ մը՝ կը գնէ զայն և տուն կը դառնա ժամը 3ին, վասն զի հոս 3ին կը ճաշեն:- (Այս ընդհանուր դրություն է այս տեղի դաստիարակության)»: Նամակագիրը, սակայն, անմիջապես հավելում է, որ «պարսավելու մտքով չ'է իր ըսածը». «Ես տեսա և տեսնվեցա լավ կրթյալ և սիրուն աղջկանց հետ»⁴⁸:

Նամականու մեջ Թագուկի գրիչը տեղ-տեղ ձեռք է բերում քննադատական ու հեզմական երանգներ, օրինակ, թիֆլիսահայ գաղթօջախում հաճախադեպ օգտագործվող «նիհիլիսթ», «սոսիալիսթ» և «որչափ ուզիս **խսրով**» վերջացող բառերի կամ էլ վարժարանների «գերմանական **խտեալական** դասատուների» նկատմամբ: Նրան զարմացնում էր տեղի հայ վարժարանների, մասնավորապես Գայանյան ուսումնարանի կրթական անմխիթար վիճակը, որի պատճառով «հայ դպրոցներն ելնող աղջիկներ Ռուսաց **գիմնազ** կը մտնին». «Եվ հետո տեղի «համալսարանական»ները... խելքերնին մտքներին գերմանական դաստիարակության տված են, որու բարձրությունը կ'երևա թե չի հասկնալու՝ շտկե շիտակ ծուլության դաստիարակություն պիտի գրուցեն: Օրինակի համար, պզտի դասատան աշակերտներ տեսա որոնք դատապարտված էին տարի մը մինչև 10 (տասը) թիվը սովորիլ»⁴⁹: Ակնհայտ է, սակայն, որ գրագիտուհին ոչ մի դեպքում չի չարախնդում. արևելահայոց «շատ պակտությունների» մեջ նկատում է Էականը՝ համընդհանուր հայրենասիրությունը». «Հարուստ և աղքատ, այր և կին, ամեն կարգի մարդ հայրենասեր է»⁵⁰:

3. Քրոնիկներ

1878-ին Թիֆլիս տեղափոխված պոլսահայ օրիորդի առջև, ինչպես արդեն երևաց նրա նամակներից, բացվում է բոլորովին նոր աշխարհ: Նա աստիճանաբար սկսում է հետաքրքրվել արևելահայոց ինչպես հանրային-քաղաքական, այնպես էլ դաստիարակության, լուսավորության և կրթամշակութային հարցերով, հանգամանք, որը փոքր-ինչ անց՝ արդեն ամուսնանալուց հետո, պիտի ծնունդ տար «Մասիս» լրագրի էջերում «Դես ու դեն» խորագրի տակ «**Օ. Ծ.**» (օրիորդ Ծերենց) ստորագրությամբ լույս տեսնող իր «կայծակնացայտ քրոնիկների»:⁵¹ Թեև այդ քրոնիկները սակավաթիվ են⁵¹, այնուամենայնիվ, ինչպես Արփ. Արփիարյանը կասեր, «գեղեցիկ տիպարներ են թեթև ոճի»⁵²: Դրանք, ի տարբե-

48 Նույն տեղում:

49 Նույն տեղում:

50 Նույն տեղում, Գերիգա Յուսուֆյանին ուղղված 1878, 27 դեկտեմբերի թվագիր նամակը:

51 Տե՛ս «Մասիս», լրագիր, Կ. Պոլիս, 1879, թ. 2438, 1/13 հոկտ., 1879, թ. 2495, 8/20 դեկտ., 1880, թ. 2560, 27 փետր./10 մարտ, 1881, թ. 2858, 1 ապր./13 ապր.:

52 Տե՛ս **Չրագղան**, Օրվան կյանքը. Տիկին Թագուհի Մելիք-Ագարյանց, «Արևելք», լրագիր, Կ. Պոլիս, 1885, թ. 339, 18 փետրվարի:

րություն Թիֆլիսից Կ. Պոլիս առաքվող մյուս թղթակցությունների խումբերամ, ծանրաբարո ու զգուշավոր բնույթի (օրինակ՝ նույն շրջանում «Մասիսում» «Շամշագրամ» կեղծանունով հանդես եկող թիֆլիսյան թղթակցի), գրված են եվրոպական քրոնիկագրության չափանիշներով՝ թեթև ու ազատ ոճ, անկաշկանդ ու անաչառ հայացք, և, որ թերևս ամենակարևորն այն է, որ հրապարակագրուհին տեղեկատվությանը, վավերական փաստին հմտորեն ընդելուզում է գեղարվեստական ինքնատիպ հանդերձանքը՝ խոսքը դարձնելով էլ ավելի պատկերավոր ու կենդանի, անմիջական ու ազդեցիկ:

Թագուհի Շիշմանյանի քրոնիկներում ամենից առաջ վառ գույներով երևում է Կովկասի մայրաքաղաքը՝ իր բազմազգ բնակչությամբ, գունեղ նիստուկացով ու սովորություններով, «առավոտը միրգ ծախող և իրիկունը գինովցած» կինտոներից մինչև «օրվան հագուստն ու զարդը վայելուչ ընտրելու դեռևս բավական զարգացած ճաշակ» չունեցող աղջիկները, Եվրոպայով շրջագայած, «ճաշակ և գիտություն ունեցող» տիկնայք... Ուրիշ խոսքով՝ քրոնիկներն ունեն նաև ազգագրական արժեք: Դիպուկ են գրագիտուհու բնորոշումները հատկապես ազգերին ներկայացնելիս. «Վրացիք կը բաղկանան՝ սովորաբար գեղեցիկ, միշտ շռայլ, միշտ ծույլ, միշտ գրպաննին դատարկ անհամար իշխաններ (որոնց վրա երբեմն Տյումա այնքան զմայլած է), և ամենահասարակ ժողովուրդն, ինչպես խոհարար՝ ծառա՝ մրգավաճառ ևլն»⁵³: Նրա հայացքից չի վրիպում նաև մի կարևոր հանգամանք. հայերն էական դեր ունեն վրաց կյանքում, անգնահատելի նպաստ են բերում զանազան ոլորտներում. «...ամենն նշանավոր ընտանյաց բժիշկը Հայ է՝ իրենց թատերական խումբին առաջին դերասանք Հայ են. իրենց բնիկ երկրին հարստությունը Հայք չնչին խանութպանեն սկսյալ մինչև կարող վաճառականը գրաված են. վերջապես կարելի է ըսել թե՛ ինչ որ **դեռ** ունին, Հայոց միջոցով է...»⁵⁴: Հնդկաձագրին երևի թե մնում էր ավելացնել, որ հայերը Թիֆլիսում կատարում էին փաստորեն նույն դերը, ինչ Կ. Պոլսում, սակայն «Մասիսի» զգուշավոր խմբագիր Կ. Ութունյանը դա չէր կարող տպագրել 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո ավելի ահագնացած համիդյան գրաքննության պայմաններում:

Քրոնիկագրի սրատես հայացքն անմիջապես նկատում է հասարակական կյանքում օր օրի բարձրացող նոր խավին՝ բուրժուազիային, և ուշագրավն այն է, որ ընդհանուր դժգոհության մթնոլորտում, երբ նրան «ազնվականը շատ սինլքոր կը համարի, զոր ժողովուրդը շահասեր կը գտնե, զոր վիպասանը ծաղրելի և բանաստեղծը նյութապաշտ կը նկարագրեն», Թ. Շիշմանյանը հասարակական-տնտեսական կյանքի գալիք առաջընթացը վերապահում է հենց այդ խավին. «Բայց որ՝ եթե խորը քննվի՝ ազգի մը կենսական մասն է, վասնզի իրմե կ'ելնեն արհեստավոր՝ աշխատող դասը և շատ անգամ մեծ մարդիկ»⁵⁵:

Գրագիտուհին պոլսահայ գաղթօջախի հայրենակիցներին տեղեկացնում էր նաև Թիֆլիսում գործող հայկական կրթօջախների մասին՝ մասնավորապես կանգ առնելով «Թիֆլիսու Հայուն պարծանք» Գայանյան օրիորդաց վարժարանի վրա: Հայրենակիցներին ցավ չպատճառելու համար զանց առնելով այնտեղ տիրող կրթական մակարդակը, որն այնքան էլ չէր հավանում (այդ մասին նա

53 «Մասիս», լրագիր, Կ. Պոլիս, 1879, ք. 2438, 1/13 հոկտեմբեր:

54 Նույն տեղում:

55 Նույն տեղում:

գրում էր միայն մասնավոր նամակներում), Թագուհին մատնանշում էր մի էական հանգամանք՝ ուսուցիչների անձնվիրությունն ու անշահախնդրությունը և մեծահարուստ խավի՝ կրթական գործին եռանդուն աջակցելը. «Դիտելու արժանի է որ Գայիանյան ուսումնարանի դասատվաց մեկ մեծ մասը տարիներե ՚ի վեր կը շարունակեն ձրի դասախոսություն: Հայկական հարատևությունը տեղվոյս Հայուն առաքինությանց մեկն է. վարժապետք՝ վարժուհիք՝ աշակերտք ջանքով կաշխատին ուսումնարանի հիմնարկության տասնամյա տարեդարձն ընել շքեղությամբ: ...Այս վարժարանը մեծ հույս և բարի օրինակ է. իր ուսումնական հառաջադիմությունը ի՛նչ աստիճան որ լինի՝ ինձ համար երկրորդական է երբ նկատեմ ոգին՝ որով աղջիկներ հոն կը դիմեն ազգային լեզուն իրենց տունները տանելով: Տեսա նաև ազնվական և մեծատուն ընտանյաց օրհորոքք՝ որք կերթան ձրի կաշխատին, իբր վարժուհի ճշդությամբ դասախոսությունք կընեն, կամ կը վարժեցնեն աշակերտները...»⁵⁶:

Թ. Շիշմանյանը, քաջ գիտակցելով թատրոնի կատարած դերը ժողովրդի կյանքում, մասնավորապես հատուկ ընդգծելով, որ «թատրոնը դաստիարակության միջոց է», և «որուն օգտակարությունը հայտնի կ'երևի երբ մտածենք թե ազգային լեզվի նույնչափ և ազգայնության վրա մեծ ազդեցությունը կը տեսնվի», քրոնիկներում չափազանց բարձր է գնահատում թիֆլիսահայ թատրոնը՝ թե՛ այնտեղ հավաքված դերասանական խմբի և թե՛ խաղացանկի առումներով. «Թիֆլիսու Հայ ժողովուրդը այս նյութիս մեջ խելոք շարժեցավ. քանի մը նշանավոր անձինք միասին հանձնախումբ մը կազմեցին ուղղություն տալու համար Հայ տեսարանին, և իրենք մինչև այսօր այնպես վարվեցան որ Վրացի և նույն իսկ Ռուս տեսարանները ստոր վիճակի մեջ են Հայուն հետ բաղդատությամբ: Մի և նույն եղերգը ֆրանսերեն թարգմանյալ ի Ռուս և ի Հայ, ներկայացյալ տեսարանի վրա քանի մը ավուր տարբերությամբ, անկարելի է բաղդատել Հայուն գերազանցության»⁵⁷:

Իրեն հաճելի նյութի մասին խոսելիս քրոնիկագրի գրիչը ձեռք է բերում զվարթ երանգներ, հեղինակը դառնում է կատակաբան ու մեջբերում ժողովրդական կենդանի արտահայտություններ՝ այդ ընթացքում չմոռանալով դրանք հասկանալի դարձնել արևմտահայությանը: Այսպես, նշելով, որ Թիֆլիսի հայկական թատրոնը միշտ լեփ-լեցուն է հանդիսատեսներով, և նույն օրվա տոմսակներ գտնելը՝ անհնար, պատմում է. «...գավեշտաբան Թիֆլիսցիներ երբ ձեռնումայն կը դառնա չի կարենալով տոմսակ ճարել՝ սրտնեղությամբ կ'ըսեն. «Հենց գիտենաս գեղարքունի լինին ծախելիս» (կարծես գեղարքունի ձուկն կը ծախեն)»⁵⁸: Թիֆլիսի հայ թատրոնի հաջողության գրավականներից մեկը նա իրավացիորեն տեսնում է վերատեսուչ հանձնաժողովի կողմից «յուր դերասանները լավ վարձատրելու» և «նոցա մեջ պատահած գրգռությունքը հանդարտեցնել ջանալու» հանգամանքներում:

Քրոնիկագիրը պոլսեցիներին տեղեկացնում է, որ Թիֆլիսում բացառիկ հաջողությամբ են անցնում Պ. Ադամյանի, Սիրանույշի և մյուս արևմտահայ դերասանների հյուրախաղերը, այն, որ եթե «Ադամյան այն գիշերվան կեցցեներու հաշվովն ապրի, պետք է կարծեմ մեկ քանի հարյուր տարիներ ողջ մնա»: Հիշատակելի է, սակայն, որ գրական բարձր ճաշակով օժտված գրագիտուհին

10
2010
թ (Ը) Գարի, թիվ 4 (32) հոկտեմբեր-դեկտեմբեր

ՎԵՄ համահայկական հանդես

56 Նույն տեղում, ք. 2495, 8/20 դեկտեմբեր:
57 Նույն տեղում:
58 Նույն տեղում:

ընդհանուր հիացմունքի համապատկերում անգամ բոլոր դեպքերում մնում է անաչառ և անմիջապես մատնանշում է նաև ստվերները. «Ադամյան՝ յուր բոլոր կատարելությամբ՝ չափազանցություններ ուներ երբեմն և բնականության սահմանեն դուրս կելներ»: Իսկ ամենից ուշագրավը թերևս այն է, որ Թ. Շիշմանյանը, մտահոգված միևնույն ժողովրդի տարանջատ հատվածների լեզուների՝ արևմտահայերենի ու արևելահայերի մերձեցմամբ, ուրախությամբ նկատում է, որ արդեն նշմարելի է առաջընթացը. «Դերասանաց խումբը Պոլսեցվոց և Թիֆլիսեցվոց կազմյալ լեզվի խառնուրդ մը կը շինե անզգալի կերպով. թեպետ հիմա դեռ ոչ գիտությունն և ոչ ճաշակն է առաջնորդ այս խառնուրդին, բայց անտարակույս ժամանակն ու գրականությունը պիտի շինեն լեզուն. սկիզբ մը կա և այդ բավ է»⁵⁹:

Թիֆլիսից Կ. Պոլիս հասցեագրված քրոնիկներում ուրույն կերպով են դրսևորվում նաև գեղագետ հեղինակի գրական-քննադատական հայացքները՝ կապված մի դեպքում՝ գրական ուղղությունների, մյուս դեպքում՝ գրական երկի օգտակար // անօգտակարության հետ: Հետաքրքրականն այն է, որ գրագիտուհին դատում է բավական ազատ, իրավացիորեն նախապատվություն չի տալիս գեղարվեստական այս կամ այն մեթոդին, չի տարվում նորաճոթյամբ. նրա համար հիմնական չափանիշը երկի մնայուն արժեքն է, որն իր հմայքը պահպանում է բոլոր դարերում. «Գալովթատերական հեղինակաց ընտրության, վիպասանական դպրոցին դեմ կան ոմանք որ ձայն կ'արձկեն և կ'ուզեն իրական դպրոցին պաշտպան հանդիսանալ հետևողությամբ Ռուս գրականության: Աշխարհքիս սովորությունն է, ինչպես զգեստներու ձևերուն նոր ձև մը կը հաջորդե, նույնպես գրականության տեսակներուն տեսակներ կը հաջորդեն. բայց միշտ հանճարը կը մնա և կը տևե դարերով. մարդիկ միշտ պիտի կարդան՝ պիտի հանդիսացնեն մեծ հեղինակաց գործերը, թեպետ քսան դար անցած լինի: Դասական՝ վիպասանական՝ իրական մեծ հանճարները՝ Սոփոկլ՝ Շեքսպիր՝ Բոռնեյլ՝ Մոլիեր՝ Շիլլեռ զանազան ազգաց մեծ միշտ մեծ են, միշտ ժողովրդյան ճաշակը բարձրացնելու համար ստեղծված, և շատ անգամ շտեմարանք են նաև ուրիշ երևելի հեղինակաց»⁶⁰: Ինչ խոսք, սա այսօր էլ ուսանելի հայացք է, որն ուղղակի շփման եզրեր ունի հանճարեղ Հ. Պարոնյանի դատողությունների հետ, ով ևս առաջ էր քաշում գրական միջակությունների ու հանճարների տարբերակման խնդիրը, գտնում, որ արվեստի ճշմարիտ երկերն անմահ են, իսկ հանճարը ո՛չ ազգություն ունի, ո՛չ էլ կրոն. «Հանճարի ծնունդ եղող բանաստեղծություն մը լավ ընդունելություն կը գտնե Անգղիայեն, որչափ ալ անոր հեղինակը սլավ ըլլա»⁶¹:

Գալով գրական երկի օգտակար // անօգտակար, բարոյական // անբարոյական բնույթի որոշմանը՝ գրագիտուհին կարծում է, որ բնավ չի կարելի հապճեպ հետևություններ անել, ինչպես ժամանակին հայ քննադատները վարվեցին, օրինակ, Վ. Հյուգոյի «Անջելոն՝ Պադուայի բռնակալը» դրաման (1835) հայկական բեմում ներկայացնելու ժամանակ. նրանցից ոմանք չհասկացան, որ հեղինակը ձաղկել է ոչ միայն արատավոր երևույթները, այլև առաքինության քողի տակ խնամքով ծածկված կեղծ բարոյականությունը. «Վ. Հյուկոյի **Անճելոն** կուտային անցյալները. եղան ոմանք որ ըսին կամ գրեցին թե **Անճելոն** օգտակար չէ Հայ

59 Նույն տեղում:

60 Նույն տեղում:

61 **Պարոնյան Յ.**, Երկերի ժող. տասը հատորով, հ. 2, Եր., ԳՍՄ ԳԱ հրատ., 1964, էջ 129:

հասարակության, և առաջ երթալով **անբարոյական** նաև դատեցին: Բարոյականության մասին այդ քննադատք չի տեսան որ հեղինակը ոչ միայն երևույթը կը դատապարտե, այլ նաև կեղծ բարոյականությունը, որ առաքինության քողերու տակ կը ծածկվի և արհամարհ ակնարկ կը ձգե սովորական և ստորին անառակության վրա: Այս բարոյականին առջև, ուր անառակությունն ու կեղծավորությունն և առնացի անիրավ բռնությունը հավասար կը շանթահարե մեծ հեղինակը, ոչինչ են բանավոր մը դյութական գորություն և թմրեցուցիչ դեղի մը անհավատալի կարողություն, որ մեռելի նման կը քնացնե կին մը»⁶²:

Ի դեպ, Թիֆլիսում նոր-նոր հաստատված ներհուն մտածողն անմիջապես նկատում է արևելահայ հատվածում ձևավորված գաղափարական սուր պայքարը «մեղվականների» ու «մշակականների» միջև, պայքար, որն զգալի էր նաև քատերական ներկայացումների ժամանակ. «Մեծամասնությունը՝ գոր ոմանք **Մեղվական** կ'անվանեն, և որ պաշտպան էր քատերական հանձնաժողովին և նոցա խումբին, որ ի Պոլսո քաջածանոթ դերասան մը՝ Ադամյանը՝ և երկու դերասանուհիք բերել տված էր, և փոքրամասնություն մը, որ **Մշակականք** կարելի է անվանել, վասնզի նորա գրգիռն և ոգին **Մշակի** խմբագրին դժկամակութենեն կը ծագեր»: Այս առիթով, ահա, քրոնիկագիրը դառնում է զվարճախոս, նրա ոճը ձեռք է բերում հումորիկ երանգներ, և գրեթե նույն պարոնյանական հեզմանքով նա արևմտահայ հատվածին է ներկայացնում Գրիգոր Արծրունուն՝ սեղմ տողերում ակնարկելով նրա և՛ ազնվական ծագումը, և՛ ստացած գերմանական կրթությունը, և՛ «Մշակում» հաճախ կիրառվող անպատշաճ ոճը. Գրիգոր Արծրունին «Պոլսեցվոց հետաքրքիր մասին արդեն ծանոթ է յուր քաղցր ոճովն և մարդավարական գրությամբք, գոր կարելի է վկայություն համարիլ յուր ծագման ազնվականությանն և բարձր գիտության»⁶³: Արդեն մեկ տարի հետո՝ 1880-ին, Հ. Պարոնյանն իր «Ազգային ջոջեր» երգիծական դիմապատկերների «Գրիգոր Արծրունի» դիմանկարում գրեթե նույն կերպ պիտի բնորոշեր «դեղուկտիվ «Մշակի» «խնդուկտիվ խմբագրին». «...Արծրունին պոլսեցիներուն **անտարբերությանը** վրա սրդողելով կը մկրտեր զանոնք **թեթև, կեղծ ազգասեր, շուներու և գողերու խառնուրդ** և ուրիշ այնպիսի ածականներով, զորս լրագրի մեջ հրատարակելու համար մարդս անպատճառ գերմանական դրոշակ ունենալու է»⁶⁴:

Ինչպես նկատելի է, Թ. Շիշմանյանի քրոնիկներն աչքի են ընկնում ոճական առանձնահատուկ կենդանությամբ. հեղինակը հաճախ է կիրառում դիպուկ համեմատություններ ու հակադրություններ, ժողովրդական բանահյուսության բեկորներ կամ աստվածաշնչյան արտահայտություններ: 1879-ի նոյեմբերի 11-ին գրած քրոնիկում, օրինակ, խոսելով Սարգիս Ջալալյան եպիսկոպոսի՝ կարոտյալ հայրենակիցներին թողած տպավորիչ կտակի մասին (25.000 ռուբլի), նա այսպիսի համեմատությամբ է ներկայացնում ազգային բարերարի թաղումը. «Բավական էր յուր թաղման հանդիսին ներկա լինիլ, բավական էր համբերությամբ և սիրով տանիլ ջրհեղեղի մնացորդ անձրևին որ Թիֆլիսու փոխարեն արտասուք կը թափեր»⁶⁵: Դրան անմիջապես հետևում է սուր հակադրությունը՝ Կովկասի փոխարքայի արքունիքում բարձրաստիճան մի պաշտոնյայի՝ «խտալական և հունական արյան խառնուրդ» **Ֆրանկլինի** դեմ՝ Կարսում հայկական

62 «Մասիս», լրագիր, Կ. Պոլիս, 1879, ք. 2495, 8/20 դեկտեմբեր:
 63 Նույն տեղում, ք. 2438, 1/13 հոկտեմբեր:
 64 Պարոնյան Հ., Երկերի ժող. տաքը հասորով, հ. 2, էջ 162:
 65 «Մասիս», լրագիր, Կ. Պոլիս, 1879, ք. 2495, 8/20 դեկտեմբեր:

դպրոցները փակելու և Կարսի մարզում ռուս աղանդավորներին վերաբնակեցնելու համար: Գրագիտուհին, ում գրիչն իր անձի պես զուսպ էր ու բարեկիրթ, երբ խոսքը վերաբերում էր բռնությանն ու անարդարությանը, դուրս է գալիս ափերից և «թզուկ դյուցազն», «գորապետության աստիճանը խոր խաղաղության մեջ ձեռք անցուցած» ու «քաջագործությանց հրեշ» բնութագրումներն է տալիս հայատյաց պաշտոնյային. «Մեռելներու կարգ կրնանք համարիլ նաև Իտալական և Հունական արյան խառնուրդ այն անձը, որ Կովկասու փոխարքային կոշիկներու ցեխն էր, և որ բարեբաղդաբար սրբվեցավ՝ մաքրվեցավ և վերցավ մեջտեղեն և Կարսի դպրոցները դարձյալ բացվեցան: Հիրավի ցավալի է այդ նահանգին վիճակը, երբ մտածենք թե Հայ ժողովուրդը Քրիստոնյա կառավարության՝ և մանավանդ Ալեքսանդրի պես ազնվասիրտ կայսեր մը հովանվույն տակ ոչ թե պաշտպանություն գտնեն, այլ հարստահարությանց հանդիպին, իրենց դպրոցները գոցվին, և դարավոր Հայ գեղացիք բռնադատվին իրենց լավ գետիները Ռուս աղանդավորաց թողուլ այդ թզուկ դյուցազնին չարակամության համար, որ գորապետության աստիճանը խոր խաղաղության մեջ ձեռք է անցուցել: Կը հավաստեն թե այդ քաջագործությանց հրեշը մերժվել է յուր պաշտոնեն»⁶⁶:

Թ. Շիշմանյանն իր քրոնիկները հաճախ է համեմուն ժողովրդական բառ ու բանով, առածներով ու ասացվածքներով: Ահա, օրինակ, հենց վերոբերյալ հատվածում հիշատակված անձի պաշտոնանկության առիթով հրապարակագրուհին մեջ է բերում դեռ միջնադարից հայտնի առածը. «Աստված տար որ խեղճ Կարսեցի Հայուն համար ստույգ չը լիներ առակը որ կըսես թե «Գնացողին տեղ աղեկը չգար»: Իսկ երբ խոսում է Ալեքսանդր Երկրորդ ցարի սպանության մասին, գրում է. «Կայսրը մեռավ, կեցցե՛ կայսրը»⁶⁷, իսկ մի ուրիշ տեղ Նապոլեոն Բոնապարտն էլ նրա կողմից հիշվում է հեղափոխական տարագիրների մասին ասված հետևյալ խոսքով. «Ավանակք ժառանգական իրավամբք»⁶⁸:

Քրոնիկներին ուրույն գրավչություն են հաղորդում նաև երևելի մարդկանց կյանքում պատահած հիշարժան դեպքերի ու իրադարձությունների տեղին նշումները, որոնք այս կամ այն չափով կենդանագրում են նրանց: Ահա դրանցից մեկը. «Վոլթեն՝ նստած օթյակին մեջ՝ երբ ժողովուրդը հափշտակյալ կը ծափահարեր յուր մեկ ողբերգության՝ կ'ըսեր. «Ապրիք Աթենացիք: Սովոկլի են տողերս, պետք է ծափահարել»»⁶⁹:

4. «Գարնան մի ասուպ» նորավեպը

1883-ին «Արևելյան մամուլում», այնուհետև նույն թվականին՝ առանձին գրքով, տպագրվում է Թագուհի Շիշմանյանի «**Գարնան մի ասուպ**»⁷⁰ ստեղծագործությունը՝ «**Օրիորդ Մենիկ**» գրական կեղծանունով: Այն անմիջապես արժանանում է ժամանակակիցների ուշադրությանը. մի քանի ամիս անց «Արևելքը» տպագրում է գրադատական, ուր հեղինակը՝ Արփ. Արփիարյանը,

66 Նույն տեղում:

67 Նույն տեղում, 1881, ք. 2858, 1/13 սպրիլ:

68 Նույն տեղում, 1879, ք. 2438, 1/13 հոկտեմբեր:

69 Նույն տեղում, ք. 2495, 8/20 դեկտեմբեր:

70 Տե՛ս «**Արևելյան մամուլ**», հանդես, Զմյուռնիա, 1883, օգոստոս, էջ 384-392, սեպտեմբեր, էջ 421-428, հոկտեմբեր, էջ 457-465, նոյեմբեր, էջ 541-545, դեկտեմբեր, էջ 561-566: Տե՛ս նաև: Գարնան մի ասուպ. նորավեպ, գրեց օր. Մենիկ, Զմյուռնիա, տպագրություն Մ. Մամուրյան, 1883:

դրվատանքի խոսքեր է ասում երիտասարդ արձակագրուհու մասին. «Արդարև նյութը պարզ է և ճշմարիտ, և վեպին գլխավոր հատկությունը կը կայանա յուր պարզության և ճշմարտության մեջ: Ամեն մեկ տեսարաններն որք կը պարզվին մեր առաջ կը ներկայացնեն մեզ մեր ամեն ավուր կենաց մեկ կտորը. սրտերնիս կուրախանա, կը տագնապի: Հեղինակը յուր վեպի անձնավորությանց հոգին զգացած է և կարող եղած է յուր ընթերցողներն նմա մասնակից ընել: Գյուտերն ճշմարիտ, հանգույցներն ճարտարությամբ պատրաստված, հեղինակը կը խաղա մեր սրտին հետ, նկարագրություններն ոգևորյալ: Կրնանք ըսել որ ո՛չ մի տող ձանձրալի է, ո՛չ մի նկարագիր շինծու: ...Ամեն մեկ տող հայտնի կ'ընեն թե հեղինակը չէ՛ մի անվարժ գրիչ. ընդհակառակն: Պարզ կը տեսնենք թե ուսումնասիրած է եվրոպական մատենագրությունը...»⁷¹: Ինչպես նկատելի է, գրաքննադատը կարողացել է որսալ ու ընդգծել երկի ժամանակակից շունչը, կուռ կառույցը, կենսական ճշմարտացի տարերքը, խորապես վերապրած զգացումն ու հոգեբանական խորքը:

Որոշ ժամանակ անց, բայց արդեն ցավալի հանգամանքների բերումով, նույն «Արևելք» լրագրում Արփ. Արփիարյանը վերստին պիտի անդրադառնար Թագուհի Շիշմանյանի նորավեպին, մատնանշեր հեղինակի հարուստ կենսավորձն ու գրեր. «Ինչպես կյանքի՝ նույնպես և գրականության մեջ կ'ընթանար շնորհալի, հուշիկ, բայց գեղաճեմիկ քայլերով: «Գարնան մի Ասուպ», անուշաբույր և կենսաբույր այդ նորավեպը, որո հեղինակն հովանի կը գտներ պարկեշտ բայց գողտրիկ ծածկանվան մը ներքև, ամփոփում էր Տիկին Մելիք-Ազարյանցի սրտի և մտաց ամեն թագուն գանձերուն: Հեղինակը կ'ըստորագրեր Օր. Մանիկ. բայց անոնք որ ի մոտո կը ճանչնային Ազնվուհի հեղինակը, կարող էին դյուրավ գուշակել թե այդ վեպը որքան որ օրիորդի մը ծաղիկներովը զարդարված, բայց կը պարունակեր յինքն ո՛չ թե աղջկան մը, այլ կնոջ մը, երջանիկ կնոջ մը սիրտն ու հոգին: Հեղինակ մը որքան ալ օժտյալ լինի գեղեցիկ հատկություններով, բայց և այնպես կյանքի փորձառությունը անհրաժեշտ պայմանն է, որպեսզի վիպասանությունն կորովալիր ներկայանա: Տիկին Մելիք-Ազարյանց նոր կը թևակոխեր կյանքի մեջ. կյանքը սիրուն էր իրեն համար, և յուր առաջին վեպը կենաց քաղցրության հրապուրիչ գույներով ներկյալ էր»⁷²: Իսկ Եր. Օտյանն իր հերթին «նուրբ ճաշակ և արվեստագետի երևակայություն» է տեսնում «Գարնան մի ասուպի» մեջ⁷³:

Ո՞րն էր Թագուհի Շիշմանյան-Մեմիկի բերած նորույթը մայրենի գրականության մեջ: Տարօրինակ գուզադիպությամբ նույն՝ 1883-ին, լույս տեսավ նաև Սրբուհի Տյուսաբի անդրանիկ վեպը՝ «Մայտան»: Դիտելի է, որ արևմտահայ վիպագրությունը, ի տարբերություն պատմական հանգամանքների բերումով համեմատաբար նպաստավոր պայմաններում ստեղծված արևելահայ արձակի (Խ. Աբովյան, Գ. Տեր-Հովհաննիսյան, Միք. Նալբանդյան, Պ. Պռոշյան, Ղ. Աղայան, Բաֆֆի), գեղարվեստական տեսակետից լուրջ քննություն չէր բռնում. հրապարակը ողողված էր արևմտաեվրոպական գրողների (Գյոթե, Շատոբրիան, Սքոթ, Դյումա) թարգմանական երկերով կամ էլ հայոց հեռավոր ու մոտ անցյալը

71 «Արևելք», լրագիր, Կ. Պոլիս, 1884, ք. 61, 15/27 մարտ:

72 Զրագղան, Օրվան կյանքը. Տիկին Թագուհի Մելիք-Ազարյանց, «Արևելք», լրագիր, Կ. Պոլիս, 1885, ք. 339, 18 փետրվարի:

73 Օտյան եր., Գովեսի Շիշմանյան (Ծերենց), «Մասիս», հանդես, Կ. Պոլիս, 1893, ք. 3997, 26 հունիսի, էջ 389:

պատկերող արձակագիրների գործերով: Բացառությամբ Ծերենցի՝ մյուս հեղինակների երկերը (Հովհ. Հիսարյանի «Խոսքով և Մաքրուհին», Հ. Հաճյանի «Հեղինե կամ գաղտնիք մը ի Կոստանդնուպոլիս», Ա. Հայկունու «Էլիզա կամ վերջին Արևելյան պատերազմի ժամանակ տեղի ունեցած իրական դեպ մը», Մ. Մամուրյանի «Սև լեռին մարդը») հիմնականում ողողված էին արկածապատում, անհավանական միջադեպերով և ունեին բավական մեղ թեմատիկա: Եվ ահա այդ համապատկերում արևմտահայ երկու գրագիտուհիները փաստորեն միաժամանակ սկզբնավորում էին արևմտահայ ժամանակակից վիպասանությունը՝ Մենիկը նոր՝ «փոքր» վեպի, իսկ Տյուսաբը՝ կնոջ ազատագրությունը պատկերող սոցիալական միտվածությամբ հագեցած լայնապատում երկի ասպարեզներում: Եվ իրավացի է Արփ. Արփիարյանը, որ «Մեր նորածին գրականությունը, որ ֆրանսիականին հովանվույն ներքև կ'աճի, կ'ուռճանա, խնամոք հյուրընկալեց վիպական մասը: ...Օտար վիպասանությունը կարող չէ կարևոր էջ մը գրավել ազգային գրականության մեջ: Վիպասանական մեծ շենքի մը անկյունակալը ազգային վեպն է: Այս հարկին ներքև ծնավ հայ վիպասանությունը և գործունեության ասպարեզ ընտրեց ազգային պատմությունը: ...Տակավին որոշ չենք գիտեր թե՛ արդյոք պետք է հանգիստ ննջենք, թե վրդովյալ լինինք, երբ կանայք կուզան ստվար բաժին մը պահանջել վիպական շարժմանց մեջ: Ինչ որ ալ լինի, վրդովյալ մնանք թե հանգիստ, կանայք մասնակից սկսած են լինիլ մեր ամեն գործոց, և հետևաբար գրականության դուռներն իրենց առաջ փակ չեն կրնար մնալ: ...Ի՞նչու չըսենք նաև թե՛ ճշմարտություն մ' է որ կանայք օտար չեն մնար ո՛չ մի շարժման, քաղաքական լինի թե կրոնական, արվեստագիտական թե մատենագրական, մանավանդ երբ կիրքը առաջին տեղ մը գրաված է այդ խնդրոց մեջ: Այս պարագայից բերմամբ է որ սկսանք ունենալ կին վիպասաններ, որոց միույն նոր մի աշխատությունը վերջերս տեսնելու բարեբաղդություն ունեցանք»⁷⁴:

«Գարնան մի ասուպը» Թագուհի Շիշմանյանն անվանել է **նորավեպ**: Այստեղ ամենից ուշարժանը նախ՝ «նորավեպ» եզրի նշումն է, որը հայ գրականության մեջ ժանրային անվանմամբ կիրառվում էր առաջին անգամ⁷⁵: «Գարնան մի ասուպից» հետո էր փաստորեն, որ հայ գրականության մեջ սկսվեցին «նորավեպ» եզրի լայն կիրառություններն ու գրական այդ տեսակի ինքնուրույն առաջխաղացումները: Դիշտ է, հայ գրականության նախընթաց շրջանում (1840-1870-ական թվականներին) ակնառու էին նորավեպի նախաշավիղային բազմաթիվ արտահայտություններ, ինչպես, օրինակ, Խ. Աբովյանի, Ճ. Արամյանի, Ստ. Ոսկանի, Հ. Սվաճյանի, հատկապես Հ. Պարոնյանի ու այլոց «փոքր արձակի» երկերում, և անուրանալի է հիշյալ գրողների երախտիքը նորավիպագրության ձևավորման ու կայացման գործում, բայց նորավեպի ժանրն իրեն ներհատուկ հատկանիշներով ու պոետիկայով՝ սեղմ ծավալ, դյուրաշարժություն, սրընթաց պատում, հանգուցալուծում և այլն, գերակայություն ձեռք բերեց հատկապես 1890-ականներին: «Հետո նորավեպերու հոսանք մը սկսավ,- իրավացիորեն նկատում է Տ. Արփիարյանը,- ոսկեղենիկ գրվածքներ կային անոնց մեջ, եվրոպական որևէ նորավեպի

74 «Արևելք», լրագիր, Կ. Պոլիս, 1884, թ. 61, 15/27 մարտ:

75 «Նորավեպ» եզրը թեև առաջին անգամ օգտագործել էր Մեսրոպ Թաղիադյանը Վ. Սրբի առիթով (տե՛ս «Ազգասեր Արարատյան», 1848, Կալկաթա, «Եվրոպա (հայ) լրագիր» հոդվածը, էջ 155), այնուամենայնիվ այն չուներ եզրի նշանակություն, «չէր ընկալվում իբրև ժանրային պատկանելությունը ցուցանող հասկացություն», տե՛ս նաև՝ **Հակոբյան Գր.**, Արևմտահայ նորավեպը (1880-1910 թվականներ. ժանրի պատմություն և տեսություն), Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 1996, էջ 101:

հետ մրցող, որոնք իրենց արժանավոր տեղն ունեցան ու պիտի ունենան միշտ, ընթացիկ գրականության մեջ»⁷⁶: Եվ Թագուհի Շիշմանյանի ստեղծագործությունը գտնվում էր վերոհիշյալ շրջանների հանգուցակետում, ուր դեռևս զգալի էին ժանրի կայացման ճանապարհի դժվարությունները:

Հեղինակը, գիտակցաբար հետևելով արևմտաեվրոպական, ինչպես «Արևելքի» գրախոսն է ասում՝ ֆրանսիական «Ռեվյու դը դյու Մոնդ» հանդեսի⁷⁷ վիպասանների ավանդույթներին, գրավվելով հոգեբանական իրավիճակը համեմատաբար համառոտ ու ամփոփ ներկայացնելու ձևերով, դիմել է նորավեպի ժանրին: Սակայն դա չի նշանակում, որ եթե Թագուհի Շիշմանյանի ստեղծագործությունը նորավեպ է, ապա այն համապատասխանում է ժանրի առաջադրած բոլոր չափանիշներին: «Գարնան մի ասուպը», իրոք, ունի ոչ մեծ ծավալ, փոքրաթիվ կերպարներ, դեպքերի ընդգրկման համեմատաբար փոքր ժամանակահատված, «միաբնակ դիպաշար», այսինքն՝ մեկ հիմնական գիծ՝ գլխավոր հերոսուհու սիրո պատմությունը, և հանկարծառի վերջույթ: Սակայն նկատելի են նաև որոշակի շեղումներ՝ դեպի պատմվածքի կամ վիպակի ժանրը ձգտող դիպաշարային աղոտ ճյուղավորումներ, ավարտուն տրոհումներ (նորավեպում դրանք տասներկուսն են, որոնցից երկուսն ունեն բնորոշ քնաբաններ Բալզակից ու օրիորդ Թեքերեյից), շուրջ մեկ տասնյակ հերոսների հիշատակումներ, էպիսոտլյար (նամակագրական) ու օրագրային ռճավորումներ և այլն: Ասել է թե՛ «Գարնան մի ասուպը», ապահովելով հանդերձ նորավեպի ժանրային հիմնական չափորոշիչները, դեռևս գտնվում էր «միջժանրային» տիրույթում: Նույնիսկ հաշվի առնելով այն փաստը, որ օր. Մենիկը քաջածանոթ էր ֆրանսիական գրականությանը, մասնավորապես հոգեբանական պատմվածքներին (Վոլտեր, հատկապես՝ Շատոբրիան), կարող ենք ասել, որ նրա նորավեպն իր պոետիկայով հատման եզրեր ունի հոգեբանական պատմվածքի կառուցման առանձնահատկությունների հետ:

Գրագիտուհին փորձել է բացահայտել կանացի հոգեբանության որոշ կողմեր, քաբուն ծալքեր, որոնք առաջին հայացքից կարող են մնալ աննկատ: Նրա ուշադրության կենտրոնում կանացի երկու հիմնական տիպեր են. առաջինը՝ օրիորդ Սաթինիկ Պերճյանը, բուռն, փոթորկուն և առինքնող, իր իսկ զգացմունքներին ու հույզերին գերի, իսկ երկրորդը՝ տիկին Գեղարդյանցը (օրիորդական ազգանունը՝ Պիսակյան), խոհուն, հավասարակշռված, հանդարտ ու խելացի: Ասել է թե՛ նորավեպում ըստ էության տեսանելի են հայ կանանց երկու տիպարներ. մեկը՝ զգայուն, դեռ կին // տղամարդ փոխհարաբերության մեջ անփորձ, մյուսը՝ ռացիոնալ ու բավականին փորձառու: Նկատելի է, որ Պերճյան // Գեղարդյանց հաղորդակցությունն ամենից առաջ աններդաշնակ է հոգեբանական առումով: 20-ամյա օրիորդը փոքր-ինչ շփվելուց հետո սիրահարվում է, իսկ «մեթոններու աշխարհքեն» եկած Գարեգին Գեղարդյանցը՝ ոչ: Եվ հոգեբանական առումով այդպիսի անհավասար իրավիճակը հանգեցնում է օրիորդի հոգեկան տվյալանքներին: Եթե պատումի միջնամասում ընթերցողի առջև Գեղարդյանցի կերպարը բացվում է դեռևս երկակի պլանում, ապա ստեղծագործության վերջում արդեն լիովին հասկանալի է դառնում Գեղարդյանցի մտտի-

76 Արփիարյան Տ., Գայերեն վեպեր, «Արևելք», լրագիր, 4. Պոլիս, 1865, ք. 3141:
77 «Ռեվյու դը դյու Մոնդ»-ը 1829-ին հիմնադրել է ֆրանսիացի հրատարակիչ Ֆրանսուա Բուլոն (1803-1877): Գանդեսը, կրելով որոշ անվանափոխություններ, հրատարակվում է մինչ օրս:

վացիոն պլանը. Մոսկվայի համալսարանի պրոֆեսոր, ով ամբողջությամբ գիտության մեջ է, ստեղծագործական գործընթացում, և ում համար ավանդական ընտանիքն ու դրանից բխող կենցաղն ինչ-որ չափով խորթ են: Այն գաղափարը, թե ընտանիքը Գեղարդյանցին կկտրի գիտությունից՝ իր սիրելի գործից, սքողված երևում է նրա տիկնոջ՝ հյուսվածքի վերջում տեղադրված նամակից, ուր կատարվում է նուրբ հարցադրում. տիկին Գեղարդյանցը վերադառնա՞ տուն, թե՞ վերադարձը կխանգարի ամուսնու գիտական գործունեությանը. «Իսկ դու ի՞նչ կ'ընես, կը շարունակե՞ս՝ առաջ կը տանի՞ս քու պատմական քննություններդ, քանի՞ հատոր պիտի լինի գիրքն և ի՞նչ է անունը. պե՞տք է որ մոտոլ լինիմ և հանգիստ չտամ որպեսզի աշխատիս»⁷⁸: Այս հարցադրումից կարելի է հետևեցնել, որ գործ ունենք օրիորդ Սաթինիկին էությանը հակառակ մի կնոջ հետ: Ի դեպ, երկու կանանց միջև եղած տարբերությունն ունի մի քանի մակարդակներ.

ա. Հուզական մակարդակ - դա հստակ երևում է այն ժամանակ, երբ Գեղարդյանցի կինն ամուսնուն գրում է, որ ինքն արտասահմանում հանդիպել է մի հայ տիկնոջ, ով առաջին իսկ հանդիպման ժամանակ անմիջապես սկսել է պատմել իր հույզերի մասին. «Թութակի մը պես կը խոսեր և իր տղուն հետ ժամանակ կը գտներ խաղալու նաև: Իր հարցմունքներն քաջալերված՝ ես ևս տեղեկություն հարցուցի և իմացա որ ինք՝ երբեմն օրիորդ Պերճյան՝ հիմա արդեն երեք տարի է որ ամուսնացեր է, թե իրենք իրենց հաճույքին համար կ'ուղևորին, թե ինք շատ գոհ է և Եվրոպիո հրաշալիքներն տեսնելով սքանչացած և ապշած: Թեև ուրիշներուն համար հետաքրքիր էր, բայց գոնե իր վիճակը և զգացմունքներն տեղն ի տեղ կը պատմեր: Իր ձևերուն և խոսքերուն մեջ ևս տեսակ մը թեթևություն գտա. միշտ ունիմ այն կարծիքը – կամ ըստ քեզ նախապաշարմունքը – թե պոլսեցիք թեթև են»⁷⁹: Այս դիտարկումը հնարավորություն է տալիս պնդելու, որ Գեղարդյանցի կինը, ի տարբերություն Սաթինիկի, հուզաշխարհով անհամեմատ «սառն» է:

բ. Մեռային (գենդերային) մակարդակ - Գեղարդյանցի կինը բոլորովին այլ կերպ է պատկերացնում իր դերը կին // տղամարդ փոխհարաբերության մեջ. ինքն իրեն զգում է ստեղծագործող սուբյեկտ: Եթե ավանդական կինն իրեն լիովին նվիրաբերում է ընտանիքին, ապա այս կնոջ արժեքանական համակարգում մեծ տեղ ունի միայնակ ճամփորդությունը: Հայտնի է, որ ճամփորդությունը կապված է աշխարհաճանաչողության հետ, հանգամանք, որն ինքնուրույն չէր կարող անել Սաթինիկ Պերճյանը, քանի որ ավանդական ընտանիքում կինը տղամարդու սեփականությունն է և միշտ պետք է լինի նրա կողքին: Իսկ Գեղարդյանցն ու իր կինը գտնվում են բոլորովին այլ հարթության վրա՝ փոխադարձ հարգանքի, վստահության... Նորավեպում ակնարկվում է, որ Գեղարդյանցի «ընտանիքը» երեխա չունի, ինչը կարելի է մեկնաբանել իբրև եվրոպական միջանձնային փոխհարաբերության մոդել (համակեցություն):

Ակնբախ է, որ Գեղարդյանցն ունի երկվության ու ընտրության խնդիր, ինչը զարգացում չի ունենում պատումում. ընթերցողը նրա ընտրության մասին տեղեկանում է մի տեսակ «կողքից»՝ անուղղակիորեն: Երիտասարդը, այնուամենայնիվ, նախապատվությունը տալիս է կին // տղամարդ փոխհարաբերության ոչ ավանդական ձևին, որի մասին գլխավոր հերոսուհին

78 Օր. Մենիկ, Գարնան մի ասուպ. նորավեպ, 1883, էջ 41:

79 Նույն տեղում, էջ 40-41:

իմանում է միայն տարիներ հետո Վիեննայում:

գ. Արժեքանական մակարդակ – նորավեպում այս շերտը հստակ երևում է Սափինիկի հոր հետևյալ խոսքում. «Եթե երջանկություն է իր կյանքն անցրնել պատվական մարդու մը հետ որ բավական **ծանոթ անուն՝ աղեկ դիրք՝ հիմամբ դաստիարակություն** ունի, դու երջանիկ կը լինիս, զավակս (ընդգծումներն իմն են.- Ալ. Մ)»⁸⁰: Վերոբերյալն ուշագրավ է հետևյալ նկատառումով. օրիորդ Սափինիկը համակերպվում է երջանկության ավանդական ա՛յդ մոտեցման հետ: Ճիշտ է, մի պահ ընդվզում է հոր՝ երջանկությանը վերաբերող ըմբռնումների դեմ, սակայն դրանք չի չեզոքացնում *գործողությունների* մակարդակում. հոգեկան որոշ աններդաշնակություն վերապրելուց հետո համակերպվում ու սկսում է ապրել իր ոչ ինտելեկտուալ ամուսնու՝ «պանքի գործողության մեջ» գտնվող Կանեփյանի հետ, ով, Սափինիկի խոսքերով ասած, «լավ կը մտածե, լավ կը գործե, լավ կը քնե և լավ կ'ուտե»: Ասել է թե՛ դուստրն ի վերջո «երջանկանում է» հոր նախանշած ամուսնական մոդելով: Ուշարժան է, որ նորավեպում առկախ են մնում Սափինիկի՝ սեփական երջանկության մասին եղած պատկերացումներն ու մտորումները: Ընթերցողին հետաքրքրող այն հարցը՝ եթե նա խոսեր, ապա ի՞նչ կասեր իր երջանիկ // ապերջանիկ լինելու մասին, կարծես թե բացահայտվում է որդու՝ Լևոնի առկայությամբ, ինչը թաքնված կերպով ընթերցողին հուշում է, որ Սափինիկը զոռն երջանիկ է մայր // երեխա մակարդակում, թեև մեզ համար այդպես էլ բաց է մնում կին // ամուսին մակարդակը: Երիտասարդ նորավիպագրուհին միտումնավոր դարձյալ ընթերցողին է թողնում Գեղարդյանցների անզավակ «ընտանիքի», համակեցության մասին մտորելու խնդիրը. այն ևս առկախ է՝ արդյոք երջանի՞կ են վերջիններս: Այդպիսի անորոշությունը ընթերցողին հնարավորություն է ընձեռում արդեն իր գիտակցության մեջ՝ տեքստից դուրս, փորձելու մտածել այդ խնդրի՝ ավանդական // ոչ ավանդական ընտանիքների կալցաման ու դժվարության, երջանկության և ապերջանիկության մասին:

Մի քանի խոսք «Գարնան մի ասուպի» պոետիկայի, պատումի կառուցման առանձնահատկությունների մասին: Ռոմանտիկական այս նորավեպում կան հետաքրքիր անցումներ ու հոգեբանական լուծումներ: Ինքնատիպ և հետաքրքիր է պատումի ոճը. այն կարծես ընթանում է երկու գծով՝ հեղինակի և գլխավոր հերոսի պատումի ձևով: Մերք գերակայող է հեղինակային պատումը՝ հանդարտ, օբյեկտիվ, երբեմն՝ հումորային երանգներով պարուրված, մերք նրբորեն անցում է կատարվում հերոսուհու ընկալումներին, ուր պատումի ոճը փոխվում է, դառնում ավելի սուբյեկտիվ ու հուզական: Այս երկուսի միաձուլումից էլ հենց ձևավորվում է նորավեպի ոճական ինքնատիպ կառույցը: Ինչպես իրավացիորեն նկատել է գրականագետ Կ. Դանիելյանը, օրիորդ Մենիկի երկում «կերպարի և հեղինակի միջև տարածությունն այնքան է կրճատվում, որ սրանք գրեթե նույնանում են կամ թե հեղինակն ինքը՝ դառնում է գործողության տնօրենը»⁸¹:

Նորավեպի դիպաշարը հազեցած չէ գործողություններով. անգամ այն դրվագներում, երբ թվում է՝ երկը պիտի ունենա դիպաշարային ինքնատիպ անցումներ, յուրօրինակ լուծումներ (Բոսֆորի նեղուցով զբոսանքի տեսարանը, Սափինիկի և Գեղարդյանցի վերջին հանդիպման կամ Սափինիկի և տիկին Գեղարդյանցի պատահական հանդիպման տեսարանները), հեղինակը ինչ-որ

80 Նույն տեղում, էջ 18:
81 Տե՛ս **Դանիելյան Կ.**, Գրական մշակներ, Եր., «Սովետ. գրող» հրատ., 1977, էջ 352:

բան թողնում է կիսավարտ՝ ընթերցողին կարծես մղելով սեփական երևակայութ-
յամբ լրացնելու այդ «բացը»։ Ուրիշ խոսքով՝ պատմողի ասելիքը չի ներկայանում
դիպաշարով, ասելիքը դրված չէ շարակարգի մեջ, հեղինակը հաճախ ինքն է
դատողություններ անում (ասենք՝ Ը գլխի՝ կենցաղային բամբասանքի
սարդոստայնը հյուսող մարդկանց մասին ասվածը), թեև երբեմն ունի շատ նուրբ
դիտումներ։ Ահա, օրինակ, մեկը. «Սաթինիկ՝ շատ առտու կը տեսներ իր դրացի
օրիորդ Թադոսյանը որ կ'իջներ պարտեզ ծաղիկներ ջրելու և տերևներուն որդերը
մաքրելու։ Այս էր իր անցյալ և ներկա միակ բարի գործը։ Խեղճը՝ քառասունն
անցած՝ առանց հիշատակի և առանց ապագայի սիրտը խիստ և աչքը չոր, ոչ թե
այն պառավ աղջիկներեն էր որ իրենց ընտանիքին օգնությունն են և առանց
բնապես մայր լինելու՝ բարոյապես մայր են, այլ անոնցմե որ հետաքրքրություն և
շատախոսություն իրենց բան գործ ըրած են։ Երբեմն այս երկու տեսակներուն
խառնուրդն ալ կը գտնվի, և հազվագյուտ չէ։

Իրավ էր Սաթինիկի ըսածը. կարծես թե վրեժ կ'առներ ամենեն, իր դժբաղդութ-
յանց վրեժը։ Ինչու՞ չէր ամուսնացեր. ինչու՞ սովորաբար չեն ամուսնանար
աղջիկները (դարձյալ մեծ մասը կ'ամուսնանան, այդ ուրիշ խնդիր)։ Անոնք որ
իրենց կը հավմին՝ իրենք չեն հավմիր, և անոնք որ ավելի բարձր են դիրքով կամ ո՛
և է արժանիքով՝ մինչև իրենց չեն խոնարհիր։ Բայց սորա կյանքին մեջ եղած էր
ուրիշ պատճառ մը նաև, ավելի ազնիվ պատճառ մը. ինք ուներ բավական ստաց-
վածք իր ծնողքեն մնացած, մտածեր էր թե ո՛վ զինքն ուզեր այդ տգեղությամբ՝ իր
դրամը կ'ուզեր։ Եվ ինքնիրեն ըսեր էր. «Ես զիս չեմ ծախեր»։ Եղեր էր օր մը ուր
փակվեր էր իր հայրենական տունը, իր փոքր քույրը և մայրն ալ մեռեր էին և ինք
մնացեր էր միմակ, բոլորովին միմակ... և հեռավոր ազգականներու տուն
սպաստան փնտռեր էր։

Սաթինիկ այդ պառավ աղջկան հետ ծածուկ պատերազմ մը հրատարակած
էր. նորա կես սուգի մանուշակագույն գլխարկներուն վրա կը խնդար և շատ
«սրտաշարժ կը գտներ» և կ'ըսեր թե նորա հագուստներն այնպես վարպետությամբ
բամբակով կարված էին որ ամեն սուր անկյուններ կը ծածկվեին։ Բայց օրիորդ
Թադոսյան ետ չէր մնար և իր ամեն մեկ տղայությունը մեյնեկ լրբության պես կը
հռչակեր»⁸²։ Ինչ խոսք, բավական նուրբ նկատում է. պառաված հարուստ օրիոր-
դը, որի միակ մխիթարանքն այժմ բամբասանքն է, ունի չամուսնանալու «ազնիվ
պատճառ»։ տգեղ լինելով՝ չի ուզում վաճառվել, բայց դա էլ իր հերթին խնդրի
լուծում չէ, քանի որ չի կարողանում հաղթահարել հոգեբանական բարդությոը, որ
երջանկանա։

Նորավեպին առանձին գրավչություն են տալիս նաև հեղինակի հմտորեն
օգտագործած ոչ խոսքային միջոցները՝ դիմախաղեր, ժեստեր և նման դետալներ,
որոնք կենդանացնում ու կոնկրետացնում են պատումը՝ նպաստելով էլ ավելի վառ
կերպարաստեղծմանը։

Այսպես, ահա, մեզանից շուրջ 130 տարի առաջ ստեղծված «Գարնան մի
ասուպը» թեև հիմնականում ունի գրական-պատմական արժեք, գաղափարական
ու գեղարվեստական առումներով էլ հաճախ խոցելի կողմեր, այնուամենայիվ
սիրո, ընտանիքի, երջանկության ու բարոյականության իր արծարծած
խնդիրներով այսօր էլ հուզում է հայ ընթերցողին ու դառնում վաղամեռիկ Թագուհի
Շիշմանյանի փոքրիկ, բայց մնայուն հուշարձանը, մի գրագիտուհու, ով ակնթար-

82 Օր. Մենիկ, Գարնան մի ասուպ. նորավեպ, Զմյուռնիա, տպագրություն Մ. Մամուրյան, 1883, էջ 10-11։

քի պես փայլատակեց հայրենի գրականության երկնականարում ու ասուպի պես անհետացավ հեռուներում՝ սերունդներին թողնելով հիշարժան լուսածերպեր...

Այդ զգայուն ու նրբին հոգին իր նամակներից մեկում հորեղբորորդուն մի անգամ կես կատակով, կես անկեղծությամբ գրել էր. «Հորս կ'ըսեմ երբեմն-երբեմն. «Երբոր երկինք երթանք օր մը Թորոս Բ շնորհակալ պիտի լինի մեզի»»⁸³:

Մնում է հավելել, որ տաղանդաշատ վիպասանից ու իր բազմաշնորհ Թագուկ-Մեհիկից վաղուց արդեն շնորհակալ է ոչ միայն Կիլիկիո մեծ իշխանը, այլ նաև երախտագետ հայ ժողովուրդը:

Summary

TAGUHI SHISHMANYAN-THE LOST METEOR OF THE WESTERN ARMENIAN LITERATURE

Albert A. Makaryan

The article is dedicated to the printed and unprinted literary heritage of the prematurely deceased daughter of the famous novelist Tserents, **Taguhi Shishmanyans Melik-Azaryants** (pen name **Miss Menik** - 1859-1885). This authoress was not only her father's virtuous "muse-daughter", "guardian-angel", but also a shrewd thinker whose unprinted letters and memoirs contain information of an inestimable value: on the one hand, they give the full depiction of Tserents's life and literary works, his public and political activity, present the history of the creation of his works; on the other hand, they reveal, specify and proofread the literary portrait of this or that thinker and revive the epoch.

The article also thoroughly analyzes the specific pattern of "little prose" entitled "A Meteor of Spring" written by the talented authoress and which has been preserved up till now. Just after the publication (1883) this work has received great attention by the literary workers, such as Arpiar Arpiaryan, Mateos Mamuryan, Ervand Otyan, etc. This work is still of great interest for the modern Armenian literature not only as a newly-opened road to short story genre, but also as an observation of man-woman relationship...



Ալ. Մելիք-Ազարյանցի և նրա Թագուկի դստեր հուշաքարերը Թբիլիսիի Վերայի գերեզմանատանը:

83 ՊԱԹ, Ծերենցի ֆոնդ, 22/1:

ՕՄԻՂԻՄՆ

ՀԱՎԵԼՎԱԾ
Բ. (Ը) ԳՊԱՐԻ, ՔԻՎ 4 (32) ԽՈԿԿՐԵՆԵՐ-ՐԵԿԿՐԵՄԵՐ 2010

ՎԵՄ համահայկական համդես